



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ресурс газиф

М. Чеченец

Сентябрь 1905




ՄԻՊՏՈՅՍ

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ,

ՀՕԳԵԽՈՐԾԿՆՆԵՐԻ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԻ ՇՈՒՐՃԸ

Ա. ՔՐՔՈՑԿ



Ա. ՋՐՃԵՆ

Արևած առաջ-քահանայ Բագրատունի



Տ Փ Խ Ի Մ

1905

Տպարան Մովսես Վարդանեանցի.

Տպ. Մ. Վարդանց, Գանովսկ. յլ. ձ. № 3.

80  
17-ԲԿ

23 SEP 2009  
S E E B 3013

Արքայի գ. Ալեքսանդրին,

280

իմբուգի պարագաներ և նոր ինուս լուսցին

717-ԲԱ

որոշումը հայր եղանակին:

206

2-15 ս. շ.

Մ Ի Պ Տ Ո Յ Տ Տ

2/17=905.

~~11~~

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ, ՀՈԳԵԿՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԵԽ ԺՈՂՈՎՐԴԻ  
ՀՈՒՐՁԸ.

Ա. ԳՐ. Ք Ո Յ Ե Կ.

19094

Ա. ԶՐԱԾՆ.



Արևա առաջ-քահաճայ Բազրութունի:

Տ Փ Խ Ի Ա.

1905

Տպարան Մովսէս Վարդանեանցի.

Տիպ. Մ. Վարդանյան, Գանովսկ. պլ. ձ. № 3.

26 FEB 2013

2741

28020-11

Доз. Цензурою. 12 мая 1905 г., гор. Тифлисъ.

ՊԵՇՅԵԼԻ ԱՆՈՒԽԵՆ

Սիրեցեալ Հայրիկ-Հայրապետին Ազգիո

Տեառն Տեառն ՄԿՐՏՉԻ Ա-ոյ

ԽՈՆԱՐՀԱՋՈՒՆՉ ՆՈՒՔՐ

Նուաստ ԿՐԿԱԿԵՐԻց:



Ի Կողմանէ Նորին Ս. Օծութեան Վեհա-  
փառ Հայրապետի ազգիս Տ. Տ. Մկրտչի՝  
առ տպագրութիւն սորին չիք արգելք: Ի 21  
Ապրիլի 1900 Տվիսիս:

Դիւանապետ Կորիւն Վարդապետ:



Թող լոէ կեղծը, փարիսեցոյցը,  
Կամ որոց Աչ է լրտանք—զրոյցը.  
Բայց ևս յանդիման Գողգոթի խաչին՝  
Ռւխտեցի լինել խաչակից Փրկչին:  
Հնծայացի:

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սշխարհը մի դաշտ է, կեանքը՝ մի կարիք.  
այդ դաշտի ու կարիքի մէջ ամեն ոք ձգում է իւր  
աշխատանքի ակօսը. այն տեղ ամեն ոք թափում է  
իւր ճիզն ու քրտինքը. 2է ոք ևս ևս նոյն աշխարհի,  
նոյն կարիքի մի վտիտ զաւակ, մի տկար մշակ եմ.  
շվատահանամ և ես ձգել այստեղ և իմ աշխա-  
տանքի հատիկը, ապագայում բեղմաւորելու ցան-  
կալի յուսով:

Թէպէտ ևս ևս չեմ զլացել իմ պարտականու-  
թեանց մէջ և ըստ շափու մասնակցել եմ գործող  
մշակներին, սակայն իմ գործը եղած է կեանքի ա-  
ռօրեայ երկոյթների հետ ծանօթանալու նկատմամբ.  
և թէկ այս փոքրիկ աշխատութիւնը 80-ական թուա-

կանի գործ է, որպէս յայտնի է երբեմ «Մեղու»-ի աշխատակից, այժմ Գեղամեան Արժ. Եղիշէ քահանային որ՝ ի Բագու. բայց շվատահացայ հրատարակել այն ժամանակները, դեռ վաղաժամ համարելով. իսկ այժմ երեսնամեայ ուսուցչական և քահանայական շրջան բոլորելուց յետոյ միայն եմ վստահանում հրատարակել, և այն, այնպիսի հանդամանքներից դրդուած՝ որոնցով վերջին ժամանակները զգալապէս շօշափուցաւ հայ քահանայի անունն ու վարկը թէ պարբերական թերթերի էջերում և թէ գրէթէ ամենուրէք. Թէ որբան ճիշտ և կամ անճիշտ էին հայ հոգեսրականութեան հասցէին ուղղած լուրերը, զըոյցներն ու յօղուածները՝ այդ հետզհետէ կտեսնուի:

Երդ՝ ովկ կարողէ ուրանալ՝ թէ երբ մի անհատ կամենում է հասարակաց աշխատանքին գործակցել, նրան անհրաժեշտ է ծանօթութիւն ունենալ նոյն աշխատանքի և աշխատողների հետ. և որովհետև այդ աշխատանքի ծաւալը մեծ է, ես անկարող եմ նոյն ծաւալի տարածութիւնը լիով չափ նշմարելու. և որովհետև աշխատողներն ես շատ են ու բազմազիմի, անհնարինէ ինձ նոցանից իւրաքանչիւրի հետ մանրապատում ծանօթութիւն ունենալ. սակայն և այնպէս ես չեմ լրանում թորել աշխատանքի դաշտումը իմ ճիգն ու բրտինը. յուսալով որ իմ գըծած շրջանակի մէջ գուրս սպրդած պակասը կլրացնէ մի այլ որ աւելի հմուտ քան զիս:

Եյս այսպէս լինելուց յետոյ, ես չեմ ուրանում և այն ճշմարտութիւնը, թէ ամենայն գործատէր պէտք իւր գործին ծանօթութիւն ունենայ և ամե-

նայն մի գործող, նախ քան գործ սկսելը, պէտք է ձեռք բերէ նոյն գործին վերաբերեալ հարկաւոր տեղեկութիւնները. և նորանց առաջնորդութեամբ այնպիսի գործ պատրաստէ, որի հիմքը զրուած լինի Ս. Աւետարանի քարոզած վիմի վերայ որին ոչ հողմերն և ոչ անձրեներն են կարող տապալել, և որ գլխաւորն է, բարոյական տեսակէտից նայելով՝ գործը ինքնին սուրբ է, ուրեմն և գործատէրը պիտի լինի սուրբ, թէ մտաղբեալ նպատակով և թէ աշխատութեանց տեսակների մէջ. Հետևաբար ուրեմն մի որեէ հասարակական գործող անհատի գուծունէութեան առաջին շրջանը պիտի լինի նոյն հասարակութեան կեանքի անցեալ և ներկայ վիճակի հիմնաւոր ծանօթութիւնը. երկրորդ՝ նոյն հասարակութեան կեանքի սկզբնական և առաջնորդող հանդամանքների հետ մանրամասն տեղեկութիւն ունենալը. և երրորդ՝ նոյն կեանքը և վիճակը բարտգելու գորեղ, խելացի և համապատասխան միջոցներ ձեռք բերելը:

Եյս և այսպիսի պայմաններով հասարակական գործիշը կարող է իրաւամբ կատարել իւր պարտը. և իւր գործունէութեան ձեռն ու եղանակը համապատասխան տանելով նոյն հասարակութեան արդի, յատուկ, սեպհական և մինչև անզամ ժառանգական սովորութեանց ու կեանքի հետ՝ կարող է արդարէ օգտակար լինել իւր ծառայութեամբը:

Մեր ազգային հասարակական գործունէութեան հանդիսում մեծ ծառայութիւն է արել Լըազրութիւնը. նա զբաղուել է միշտ ժողովրդի տնտեսական, քաղաքացիական, պատմական, կուլտուրային... և այլն

և այլն, վիճակը բարելաւելու պատմական և առօրեայ խնդիրներ շօշափելով. գրաղուել է նաև հետեւալ նուիրական և օրուայ խնդիրներով այն Է՝ Եկեղեցի և Ռւսումնարան, Կրօն և Լեզու, Հոգեորականութիւն և Ժողովութղթ. Միթէ կարելի է ուրանալ— որ եթէ այսօր յառաջադիմութեան քայլ է նկատուում մեր մէջ, գիտակցօրէն ինքնաճանաշման առմամբ՝ այդ լրագրութեան շնորհն է մեծ մասամբ. և գրի ու խօսքի՝ ընդհանրապէս. սակայն և այնպէս պէտքէ խոստովանել և այն՝ որ լրագրութեան մէջ ուսումնարանների և եկեղեցւոյ, ժողովրդի և հոգեորականների վերաբերութեամբ եղած յօդուածները կամ յայտնուած մտքերն եղած են կամ պատահաբար, կամ միակողմանի և թոյլ և շատ սակաւ՝ պարբերաբար և բազմակողմանի. այդ իսկ պատճառով իրական օգուտը չէ մարմացել, մի որոշ ուղղութիւն շոշափող խնդիրների նկատմամբ. ուստի և չէ պլոտղաբերել այն շափով՝ որ շափով պէտք էր սպասել: Այս համեստ գործը, մի տեսակ ակնարկ է մամուլի, դէպի հոգեորականները, բռնած դիրքի՝ և ժողովրդի ու քահանայի մէջ տիրող տննախանձելի յարաբերութիւնների առմամբ, որը երկու շրջանի է բաժանում մի վերնագրով—որ զրբիս մակագիրն է կազմում. բայց երկու զրբոյկի բաժանուած—Ա. Ջըրջան. Բ. Ջըրջան վերտառութեամբ: Եւ այս ինչու որովհետև այս Ա. Ջըրջանը մի զրական առաջարկ է անում նոյն յարաբերութիւնները բարելաւելու միջոցների ձեռնարկութեամբ և Քահանայական Խոնձկի սահմանադրութեամբ: Իսկ Բ. Ջըրջանը քննական պլոտոյտով է ընթանում խնդիրների շուրջը, որոնք վե-

բարեբում են հաւատի գործին և ժողովրդի ու հոգեցորականների լարուած յարաբերութիւններին։ Ես, ստիպուած աններող հանգամանքներից, հազիւ միջոց ունեցայ ի լոյս հանել Ա. Շըշանը միայն, Բ. Շըշանի հրատարակութիւնը թողլով բարեյացող հանգամանքներին։ Այսպէս ուրեմն Ա. Շըշանում խօսւում է քահանայի և ժողովրդի յարաբերութիւնների և նոյն յարաբերութիւնները բարելաւելու միջոցների վերայ։ Բ. Շըշանում մի հարևանցի ակնարկ և տեսութիւն է ձգւում հայ պարբերական հրատարակութեանց մէջ յայտնուած Հոգեռականութեան և Ժողովրդի, Եկեղեցւոյ և Ուսումնարանների, Կրօնի և Ազգութեան և Քրիստոնէական ուսուցման կամ Աւետարանական ճշմարտութեան վերաբերեալ կարծիքների ու գաղափարների վերայ։ Ուստի և կրում է «Մի պողոյտ Հայ Մամուկի և Հոգեռորականների ու ժաղովրդի շուրջը» վերնագիրը։

Յանկալի նպատակիս հասած կլինէի՝ եթէ ա. որ հրապարակական անշառ քննութիւնը սորա պակասը լրացնէը. և բ. որ սորա մէջ յիշուած կա- ընոր առաջարկները իրագործուէին:

## Արսէն աւ. քահ. թագուածունից

## Ա. Ծ Ր Զ Ա Ն.

Ա Բ ա ժ ի ն.

Քահանայի և ժողովրդի յարաբերութիւնները և նոյն  
յարաբերութեանց բարորման միջոցներ:

I.

Ոսճիկ տալու դէմ առարկողների փաստաբանութիւնը.

Ես կարծեմ որ կլինեն ոմանք, որոնք հոգեո-  
րականաց զրութեան նիւթական ապահովութիւնը  
կանոնաւոր ոռձկի միջոցաւ աւելորդ կհամարեն,  
հիմնուելով հոգեորականաց իսկ հոգեորապէս կենցա-  
դավարութիւն պարտականութեան ու կանոնների և  
առաքելական կամ նախնական ժամանակների սովո-  
րութեանց վերայ:

«Հոգեորականաց իսկ հոգեորապէս կենցադավա-  
րութեան պարտականութեան ու կանոնների վերայ  
հիմնուելով» ասողների միտքն էլ ունի իւր նշա-  
նակութիւնը, թէև միակողմանի. նոցա կարծիքն  
է—առաջին՝ որ հոգեորականը, այն է քահանան,

պէտքէ լինի սակաւապէտ. իբրև օրինակ իւր ժողովրդի.  
նա իւր թէ նիւթական և թէ բարոյական կենցադով  
մի պարզ հայելի պիտի լինի իւր հովութեան յանձ-  
նուած հօտին, որը այդ հայելոյ մէջ պէտքէ տեսնէ  
իւր կեանքը և կենցադավարական ձեր. չափաւոր  
կենցադ վարող քահանային անդադար նայելով ժողո-  
վուրդը՝ ինքն ևս կաշխատէ նմանուել իւր հոգեոր  
հօրը. և ուրեմն չափաւոր կենցադավարութիւնից հե-  
տեւաբար յառաջ կգայ և նիւթական ապահովութիւնը.  
երկրորդ՝ որ հոգեորականը, այն է քահանան, ունե-  
նալով իւր կանոնաւոր ոռձիկը, զանցառու կլինի իւր  
հոգեոր պարտականութեանց մէջ դէպի իւր ծուխը,  
նա պարտական է երթևեկել իւր ժողովրդոց աները  
թէ օրինակատարութեանց ժամանակ և թէ արտաքոյ  
դորան, այն ինչ կանոնաւոր ոռձիկը կծուլացնէ քա-  
հանային իւր պարտականութեանց գործաւմ. սորա  
հետևութիւննէ, որ քահանային ձգող մագնիսը նիւ-  
թական ակնկալութիւնն է և ոչ բարոյական պարտի-  
քը. երրորդ՝ որ հոգեորականը, այն է քահանան,  
զրկուած պիտի լինի, պիտի ընտելանայ զրկանաց և  
կարօտութեան վիճակին, կլինի՝ լաւ. չի լինի՝ համբե-  
րութիւն. իսկ ժողովուրդը ինքը պիտի հոգայ իւր  
քահանայի մարմնաւոր ապրուստը, որովհետև քահա-  
նան էլ նորա հոգեոր անունդի համար է տքնում և  
աշխատում. սա ըստ առաքելոյն՝ թէ «Եթէ մեք՝ ի  
ձեզ զհոգեորն սերմանեցաք, մեծ ի՞նչ իցէ, եթէ ի  
ձենջ զմարմնաւորն հնձեւցուք». Պօղոս առ Կորնթա-  
ցիս:

Ահա երեք կէտեր, գուցէ և շատ կան, որոնց  
հիման վերայ տակաւին աւելորդ կարող են համա-

բել ոմանք քահանայի կանոնաւոր ոռճկի սահմանա-  
դրութիւնը:

II.

Հարեանցի ակնարկ այդ փաստարանեալ առարկութեանց  
մասին.

**Ա**րեանցի մի ակնարկ ձգենք այդ կէտերի  
ճիշտ և անճիշտ կողմերի վերայ:

Առաջին կէտը, թէ հոգեորականը սակաւապէտ  
պիտի լինի, այդ շատ համակրելի է, բայց թէ ոռճի-  
կը կիսանդրէ՝ արդեօք քահանային սակաւապէա կամ  
չափաւոր լինելու մէջ, ես կարծեմ հիմնական չէ այդ  
կարծիքը. մի՞թէ չափաւորութիւնը արդիւնք է ան-  
կանոն ոռճկի, իսկ կանոնաւոր ոռճիկը շուայլութիւն  
է յառաջ բերում. սա ի՞նչ տրամախոնութիւն է: Քա-  
հանան ունենալով կանոնաւոր ոռճիկ, դարձեալ կա-  
րող է չափաւոր լինել, որպէս և չունենալով այն.  
Չափաւորութիւնը կախուած է նորա կանոնաւոր և  
հաշուապահ կենցաղավարութիւնից և ոչ բնաւ ան-  
կանոն ոռճկից. անկանոն առւրքը, պատհական ար-  
դիւնքը՝ ընդհակառակը անհաշիւ կենցաղավարութիւն  
և անկանոնութիւն է յառաջ բերում. որովհետեւ այ-  
սօր շատ կընկնի ձեռքը՝ շատ կծախսէ, վաղը ոչինչ՝  
փոխարինութիւն պիտի անէ, որից և յառաջ կուգայ  
անկանոն և անհաշիւ կեանք, այն է շուայլութիւն և  
չքաւորութիւն. սակաւապէտ և չափաւոր լինելուն՝  
կանոնաւոր ոռճիկը աւելի ևս կնպաստէ, որովհետեւ

միանգամ ընդ միշտ հաշուելով իւր ոռճկի որքանու-  
թիւնը, ըստ այնմ և կըտընօրինէ իւր գերդաստանա-  
կան ծախքը. ոռճկի գումարի համեմատ կկազմէ իւր  
ընտանեկան կամ արտաքոյ կարգի ծախուց ցուցակը.  
և այդ ծրագրած շրջանակից ոտքը դուրս չի դնիլ,  
որից և յառաջ կուգայ չափաւոր և կանոնաւոր կեն-  
ցաղավարութիւն: Բայց այժմ ի՞նչ պիտի անէ քահա-  
նան. այսօր կայ՝ լաւ. կտնօրինէ իւր ծախքը, որքան  
ներում է գումարը. այն վերջացաւ. այժմ պիտի  
սպասի՝ թէ Երբ օրէնք կպատահի, որ իւր պարտքերը  
հատուցանէ և գերդաստանական ծախուց պակասոր-  
դը լրացնէ. ուրեմն եթէ քահանան չգիտէ իւր մուտ-  
քի հաշիւը, ի՞նչպէս կազմէ նա իւր ծախուց նախա-  
հաշիւը. դորանից ի՞նչ կարող է յառաջ գալ՝ չափա-  
ւորութիւն արդեօք, թէ խանգարեալ, խառն ու շր-  
փոթ կենցաղավարութիւն. որպիսին և վարում է քա-  
հանան մինչև այսօր:

Երկրորդ կէտը, թէ հոգեորականի կանոնաւոր  
ոռճիկը պատճառ կտայ նոյն հոգեորականին զանցա-  
ռու լինել իւր պարտակատարութեանց մէջ և ծուլա-  
նալ իւր գործում՝ դարձեալ հիմնական չէ. Երբ կա-  
րող է գործակատարը բարեխղճաբար և ջերմեռան-  
դութեամբ կատարել իւր գործը. մի՞թէ այն ժամա-  
նակ՝ երբ անկանոն ոռճիկ ունենայ. ոչ երբէք. Երբ  
աւելի պարզերես կմտնէ քահանան իւր ժողովրդի  
սունը, մի՞թէ այն ժամանակ՝ երբ գերդաստանական  
ծախքը առաջին՝ և սակայն լրացնելու դահեկան մի  
անգամ չունի. և այժմ ի՞նչպէս ազազուն դաշտերը  
կենսատու անձրեին են սպասում, որ շունչ առնեն.

քահանան նոյնպէս օրէնքի է սպասում, որ մի կտոր հաց ճարի իւր մանկիների համար:

Ճշմարտութիւնը ծածկելն յանցանք է. խոսառվանելը պարզաբար՝ պարտականութիւն է, թէև անհաճոյ՝ լսողների համար: Ճշմարտութիւնը այս է, որ քահանայի ապրուստի նշանաւոր արդիւնքը կազմում են՝ ա. թաղումը. բ. պսակը. միւս օրինակատարութիւնը յիշելու էլ շատ: Արդ՝ եթէ մեր այս գրութեամբ, ժողովրդի մէջ չերևաց մէկը, որ յարգելով մի որևիցէ արժանաւոր քահանայի ներքին և արտաքին ընտիր բարեմասնութիւնները, որով օժտուած է քահանան, բայց անսապահով գրութիւնը օրհասական թշնամու նման յետևիցն է ընկած որ տապալէ. և ազնուահոգի խեղճ քահանան իւր զրկանքներով հանդերձ բարոյական պարտք է զգում չզրկել իւր որդիքը պատշաճաւոր ուսումից ու կրթութիւնից՝ եղան ժողովրդի հարուստ դասակարգի մէջ իսկ Աստուածաէր, իսկ Կրօնասէր, իսկ Ազգասէր, իսկ կարեկիցներ, իսկ մարդասէրներ՝ որ կանչէին այդպիսի քահանաներին և ասէին. «Որովհեաև Ձեր բարի անունն ու համբաւը վկայում են շատերը. ես կամենում եմ ձեզ խրախուսել. և ինչո՞վ կարող եմ ձեզ ծառայել—ա. զրաւոր երկասիրութիւն ունիս. կհրատարակեմ իմ ծախտով. բ. որդւոյդ կրթութեան և ուսման վճարի կարօտութիւն ունիս. ես կհոգամ. գ. պարտք ունիս, որի համար պարտատէրերդ քեզ նեղացնում են, ահա առ և հատուցիր»... և այլն և այլն: Ի հարկէ այս երեքից մէկը կլսէ քահանայից և իւր օգնութիւնը անելով՝ կազմոէ քահանային այն տարօրինակ՝ բայց հարկից ու կարիքից ստիպուած դան-

կութիւնից ու մտախոհութիւններից – թէ «Երբ մի հարուստ ննջեցեալ պիտի պատահի կամ պսակ՝ որ կարողանամ պարտքերս տալ, որդուս ուսման վարձը վճարել, որ դուքս չանեն, չարտաքսեն ուսումնարանից, որ . . . » և այն և այլն:

Ահա արժանաւոր, բայց աղքատ և անապահով քահանայ. հարուստ ժողովուրդ, ինչո՞ւ չես օգնում. և երբ այսպիսի մի քահանայ գուռդ է գալիս և իւր ցաւերը առաջդ է զնում, դու ի՞նչ ես ասում. լաւ գիտես, բայց կրկնեմ, որ ուրիշներն էլ իմանան, դու ասում ես. «Ես շատ բարեգործութիւններ եմ արել, էլի անում եմ թէ օտարներին, թէ իմ աղքատ բարեկամներին, թէ ուսումնարաններին, ներեցէք տէրհայր, այնքան չունիմ, որ ամենքին էլ հասնեմ». լըսում ես քահանայից – «Ես էլ ամենքից չեմ. իմ պաշտօնիս սրբութեան, կոչմանս վսեմութեան, վարքիս անբիծ մնալու մասին շատ զրկանքներ եմ կրել և որ կարող էի ապահով վիճակ ձեռք բերել այն ճանապարհներով՝ որովք ուրիշներն են ձեռք բերել՝ չեմ արել, միայն քահանայական կոչման վեհութեան նախանձափնդիր լինելուս համար. և այդ պատճառով մնացել եմ աղքատ և անապահով, դրուածքներս մնացել են անտիպ, որդիքս էլ կարսդ են արտաքսուել դպրոցներից. և ի՞նչ ապագայ», Պատասխանն է. «Ներեցէք, ուժերիցս վեր է. ի՞նչ անեմ»:

Սորանից յետոյ ի՞նչ է մնում խեղճ քահանային – գլուխը քաշ՝ մեկնել պալատից, և մտածել – օհ, արդարադատ Աստուած, այս ի՞նչ դառն ժամանակում ենք ապրում. այս ի՞նչ անկարեկցութիւն. էս էլ քեզ բարեհամբաւ քահանայ. դէ արի ու ապրի, որ չի լինի,

ռւզես չուզես՝ աչքդ տնկում ես թաղման ու Պսակին.  
և ննջեցեալ պատահած ժամանակն էլ, ուրախ ու-  
րախ վաղում ես ննջեցելոյ տունը՝ բայց ցաւալի դէմ-  
քով, կոկորդիլոսի արտասուք թափելով ու զանազան  
՚ի խորոց սրտի հառաջքներ հանելով՝ հանդիպում ես  
ննջեցելոյ սգաւորներին:

Իսկ ժողովուրդը ի՞նչպէս է նայում իւր տան  
քահանային, երբ ՝ Հանում է տուն, հասկացողը թեղ  
հասկանայ, միայն այսքանո կարելի է ասել, քահանան  
այն ժամանակ միայն պարզերես կարող է մտնել իւր  
ժողովրդի տունը, երբ ժողովուրդը համոզուած կլինի որ  
քահանան իրանից պատահական ակնկալութիւն չունի.  
իսկ երբ չի ունենալ քահանան այդպիսի ակնկալութիւն  
իւր ժողովրդից՝ երբ կանոնաւոր ոռծիկով ապահովուած  
կլինի. այն ժամանակ քահանան, յիրաւի ոչ իբրև կէս  
մուրացկան, այլ իբրև հայր և դաստիարակ կմտնէ իւր  
ժողովրդի տունը և ժողովուրդը նորան սիրով կընդու-  
նէ, որովհետև փողի ակնկալութիւն չկայ այլ ևս: Ու-  
րեմն կանոնաւոր ոռծիկը քահանայի կաշկանդուած  
քայլերը ընդհակառակն շատ համարձակ բացանելով  
հանդերձ և իրաւունք է տալիս պարզերես մտնել իւր  
ժողովրդի տունը. և ոչ որպէս այժմ—ահուզողսվ. իսկ  
թէ ոռծիկը պատճառո կլինի արդեօք քահանային զան-  
ցառու լինել իւր պարտականութեանց մէջ՝ այդ ան-  
երևակայելի է մինչև անգամ. և եթէ փորձը մի այլ  
հանգամանքում ցոյց է տուել մի այդպիսի տգեղ  
վարմունք որկիցէ պաշտօնակատարի նկատմամբ՝ դա  
դեռ ապացոյց չէ, թէ կանոնաւորութիւնից անկանոն  
վարմունք պէտքէ սպասել. բայց բացառիկ հանդա-  
մանքների վերայ եթէ հիմնուենք, ոչ մի օրէնք չի

— 17 —



կայանայ, ոչ մի բարեկարդ հիմնարկութեանց կազ-  
մակերպուի և ոչ մի գաղափար չի մարմնանայ և չի  
իրագործուի:

Արժանաւոր վարձը, սահմանեալ ժամանակին  
ճշտութեամբ վճարած՝ ոչ թէ զանցառութիւն կար-  
տադրէ, այլ ամենայն զանցառութեանց առաջը կառ-  
նէ. և վարձկանը իւր նիւթական այդ ապահովու-  
թեամբ և բարոյապէս կզօրանայ:

Երբ տանը հաց չկայ ուտելու, որ քահանան  
ստոյիկեան կինի իւր ժողովրդի բարոյական կրթու-  
թեան վերայ մտածելու. տուր ցյագ հաց և ոյժ՝ պա-  
հանջիր կանոնաւոր գործ և աշխատանք:

Երբորդ կէտը, թէ հոգեորականը զրկուած պիտի  
լինի և զրկանաց ու կարօտութեան վիճակին պիտի  
ընտելանայ. եթէ չասեմ հիմնական չէ՝ զէթ ժամա-  
նակի ոգւոյն և արդի աշխարհայեցողութեանը՝ բը-  
նաւ անհամապատասխան. զրկանաց և կարօտութեան  
վիճակին ամեն ոք պարտական է սովորել, ընտելա-  
նալ և ոչ միայն քահանան, իսկ թէ զրկուած լինելով՝  
կհամապատասխանէ արդեօք ներկայ հանգամանաց և  
պահանջներին, երբ կեանքը այդ չէ պահանջում. կար  
յիրաւի ժամանակ, երբ զրկուածը յարգի էր, նորան  
յարգում էին, նահատակ էր՝ նորան պաշտում էին.  
բայց աւաղ, այժմ զրկուածին աւելի են զրկում, ա-  
ւելի են ոտնահարսւմ. ժամանակը փոխուել է, հան-  
գամանքները նոյնպէս, մարդը՝ նոյն ժամանակի զոր-  
ծադիրը, հտշւով ու խելացի տնտեսի նման պիտի  
կենցաղավարի. ոչ ժամանակի ուժգին հոսանքին բո-  
լորովին պիտի գիմադրէ՝ որովհետև չէ կարող, և ոչ  
միամտաբար նոյն հոսանքից պիտի ընկճուի. այլ

իբրև օձ խորագէտ՝ պիտն սողայ իւր պտոյտներով և իբրև աղաւնի միամիտ՝ պիտի հրճուի իւր թռիչքներով։ Չանցաւ արդեօք այն ժամանակը, երբ ժողովուրդը լիացնում էր իւր քահանային ամենայնիւ և յամենայնի. չանցաւ արդեօք այն ժամանակը, երբ քահանան չէր միայն քահանայ իւր ժողովրդի համար, այլ էր նա և քահանայ, և ուսուցիչ, և սեղանակից, և ընկեր՝ և յը, և տէր, և խորհրդատու, և դատաւոր, և փաստաբան, և ամենայն ինչ. և ըստ այնմ իսկ՝ ժողովուրդը աւելի շուտ ինքը կը մնար քաղցած, մերկ, ծարաւ և այլն. քան թէ իւր քահանան և քահանայական գերդաստունը—տիրուերի օնախը. աւազ փառացն անցաւորի. քահանայական այդ փառքն անցաւ. որովհետև ժամանակն էլ փոխուեցաւ. ժողովուրդը իւր համեստ կենցաղավարութեան շրջանից դուրս եկաւ, քահանան էլ դուրս եկաւ. ժողովուրդը շուայլացաւ, քահանան էլ շուայլացաւ. ժողովուրդը հետեւց կեանքի հոսանքին, քահանան էլ հետեւց. որովհետև ժողովրդի ձայնը բարձրացաւ, իոկ քահանայինը քանի գնաց մեղմացաւ ու ցածացաւ. ում շնորհիւ. և ժամանակի, և քահանայի, և մանաւանդ անհեռատես թղթակիցների. Այժմ այն ժամանակը չէ, որ եթէ քահանան հոգեսրը սերմանէ՝ յոյս ունենայ որ մարմնաւորն էլ դիւրաւ և առանց անբաւականութեան կննձէ. ով չէ հաւատում՝ թող բարեհամի ստուգել այս ամենը. և կհամոզուի որ իւր համեստութեան քօղը պատառել չուզող քահանան քաղցած է մնում և նա կազքատանայ բնաւին եթէ կողմանակի պարապմունքներ չունենայ, այն է կամ ուսուցչութիւն և կտմ այլ պարապմունքներ՝ որոց

թուելն ու անուանելը և աւելորդ եմ համարում և անյարմար. Եթէ կառարկեն—թէ լաւ քահանան կը պաշտպանուի իւր ժողովրդից, կպատասխանեմ՝ թէ սխալ է, հաստ ու բարակ մի գին ունի. այդ էլ փորձուեցաւ և օգուտ և ոչ մի երեցաւ. ուրեմն մնում է մի ելք միայն, որ է քահանայի նիւթական ապահովութիւնը կանոնաւորել ուռնկով։

Ուրեմն հոգեսրականներին նիւթակտն ապահովութիւն է հարկաւոր և ամեն ոք կ'հաստատէ այդ. մինչև այժմ մեր պարբերական թերթերի մէջ չէ յայտնուել մի այնպիսի իրական միջոց, որը թէև դժուարին՝ սակայն և այնպէս գոնէ շատ հեռու չլինէր իրագործման սահմանից. ես չեմ ուրանում որ մեր մէջ մի չնչին գործ անգամ զլուխ բերելու համար սարսափելի դժուարութիւնների ու խոչընդուների կհանդիպուի, ուր թէ մի այնպիսի ծանրակշիռ գործ, որպիսին է հոգեսրականաց կանոնաւոր ուռնկի խնդիրը, և այն՝ դարաւոր սովորութիւնից յետոյ. ՚ի հարկէ այս դէպքում ոչ յօդուածագրերն են մեղաւոր և ոչ ամենայն մի միտք յայտնող հրապարակախօս. այլ ժամանակին պիտի սպասել, միշտ արծարծելով հոգեսրականաց նուիթական ապահովութեան խնդիրը, որպէս զի ժողովուրդը հետզիւտէ ընտելանայ և պատրաստուի այդ խնդրի իրականացմանը. որովհետև այսօր է թէ վաղը, կանոնաւոր ուռնկով պէտքէ ապահովել հոգեսրականաց նիւթական դրութիւնը. քանի որ յայտնի է՝ որ ամենայն մի գործ և աշխատանք երենց արժանաւոր վարձն են պահանջում:

III.

Ոռնիկ տալու դէմ առարկողների մի այլ ձև փաստաբանութիւն  
և պատասխան:

**Ա**ն առարգողաբ, թէ բժշկի դրութիւնն էլ գրէթէ նման է քահանայի դրութեանը. նա կանոնաւոր ոռնիկ չունի, այլ նորա այցելութիւններն են գնահատուում. և սակայն և ապահովուած է և կանոնաւոր կենցաղ է վարուա. քահանան ևս նոյնպիսի մի հոգեոր բժիշկ՝ իւր այցելութիւններից—օրինակատարութիւններից գոյացած արդիւնքներով թող կառավարուի. ինչպէս կարելի է կանոնաւոր ոռնիկ տակ ճնշել ժողովրդին, երբ նա իւր գլխահարկը հազիւ է վճարում:

Ինչ ասենք այսպիսի առարկողներին. կհամեմատուի արդեօք բժշկի վիճակը քահանայի վիճակի հետ. ամենայետին բժիշկն անգամ օրական առնուազն երկու երեք այցելութիւն կունենայ. երեք այցելութեան վճարն տասն արծաթ, ամիսն անում է երեք հարիւր արծաթ. բայց որ բժիշկն է՝ որ այսպիսի սուլ վարձատրութիւն ունի. քանի որ սովորական մանկաբարձուիների—տատմէրների վարձատրութիւնն անգամ հասնում է այս գումարին. եթէ չառեմ աւելի է. իսկ քահանային տաւէք դորա կէսը՝ հարիւր յիսուն արծաթ ամսական ոռնիկ և նա ապահովուած կլինի. Բացի այդ՝ բժշկի վարձատրութիւնը կանոնաւոր ոռնիկը արդեօք ուսուցչին ճիշտ մինել իւր պարտակատարութեան մէջ. և գժտութիւն

նից, որովհետև գրեթէ ամենայն օր կայ, ամենայն օր նոր գրպանից գրամի ձայն է գալիս. իսկ քահանայի գրպանում խոր լուութիւն է տիրապետում. և վերջապէս ինչպէս համեմատենք բժշկի այցելութիւնը քահանայի այցելութեան հետ, բժշկի համար պատրաստած այցելութեան վարձը կարծես ելեքտրականորէն է գուրս ձգւում հիւանդի կամ նորա բարեկամի քսակից. և մի ակնթարթում մտնում է բժշկի գրպանը. այնքան սիրով և այնքան փութով է կատարուում այդ գործողութիւնը. իսկ քահանայինը՝ կամ չնչին և տրտունջներով, կամ ապառիկ և կամ ոչինչ. բացառիկ արժանաւոր վարձատրութեան մասին չէ խօսքս, որովհետև շատ հազիւ է պատահում. Այսպէս պէտքէ հասկանալ նաև փաստաբաններինը ու նման պաշտօնեաներինը:

Այս ամենից կարելի է հետևացնել, որ կան պաշտօնավարներ, որոնք թէկ բժշկի և քահանայի նման կանոնաւոր ոռնիկ չունեն, սակայն և այնպէս՝ այնպիսի պայմանների մէջ են, որոնցմով նոցա դրութիւնը ապահովուում է: Բժշկի գործունէութիւնը ապահով պայմանների վրայ հիմնուած լինելով՝ անընդհատ յառաջ է քայլում. բժիշկը իրեն սահմանուած գործը կատարում է և չէ ձանձրանում, որովհետև վարձը միշտ կայ և արժանաւոր վարձէ և սիրով է տրւում:

Ուսուցչութիւնը իւր կանոնաւոր վարձատրութիւնն ունի. և ուսուցիչը իւր հաշուի մէջ սխալուել չէ կարող, որովհետև նշանակուած ոռնիկ ունի և ստանում է այն նշանակեալ ժամանակին: Կանոնաւոր ոռնիկը արդելում է արդեօք ուսուցչին ճիշտ մինել իւր պարտակատարութեան մէջ. և գժտութիւն

կամ հակառակութիւն ձգում է արդեօք ուսուցչի և նորա սաների, և կամ հէնց նոյն իսկ տեսչի և հոգաբարձութեան մէջ: Թող ուսուցիչները խոստովանեն իսկութիւնը. բացառութիւնների դէմ խօսք չունեմ, ես գոնէ, 'ի մասնաւորի, երեսնամեայ ուսուցչութեանս ասպարիզում ոչ մի անպատճեռութեան չեմ հանդիպած:

Մշակուլ անգամ մի որոշեալ պայմանի տակ է, որովհետև մշակը նախապէս պայմանաւորւում է զործատիրոջ հետ, ապա թէ սկսում է ձեռնարկել գործին:

Ինչպէս վերոյիշեալ պաշտօնները, նոյնպիսի պաշտօն է և քահանայութիւնը. այն զանազանութեամբ սակայն, որ այս պաշտօնավար քահանայի վարձասակայն, որութեան քանակը և ժամանակն իսկ անորոշ է, պատահական է և ոչ ըստ գործոյն:

Ամենայն գործ կամ աշխատանք համեմատական վարձատրութիւն է պահանջում, գործի կամ աշխատանաց դժուարութեան ու գիւրութեան համեմատ պիտի վարձատրուի գործաւորը կամ աշխատաւորը, և այն՝ միշտ որոշեալ պայմանով:

Վերոյիշեալ գործերի և գործաւորների մէջ պահանջուած համեմատութիւնը նշմարելի է. ըստ գործոյն վարձ կայ և որոշեալ պայմանով. քահանայական գործունէութեան մէջ այդ համեմատութիւնը չէ երկում:

Բժիշկը գործում է. նա յոյս ունի որ իւր գործին համապատասխան վարձ ունի, և արժանաւոր վարձ, կամ սահմանուած ոռձիկ. նա ապահով է, նա իւր կենսական հաշիւը ծրագրել է. ուստի և ընտա-

նեկան կեանքն էլ մի որոշեալ սահման ունի. որից այն կողմը անցնելու կարիք չունի. որովհետև արժանաւոր վարձատրութիւն ունի, որը հաւասար է կանոնաւոր ոռձիկին:

Մշակը գործում է. նա գործը սկսելուց առաջ պայմանաւորւում է գործատիրոջ հետ իւր աշխատանաց վարձի մասին. պայմանը հաստատուում է ըստ գործոյն և նա գործում է. նա ապահով է, նա ուրախ է իւր գործի մէջ, որովհետև իւր վարձը որոշուած է թէ քանակով և թէ ժամանակով:

Այս հանգամանքների և պայմանների տակ են ուսուցիչները, փաստաբանները, արհեստաւորները և առհասարակ բոլոր պաշտօնավարները. նոքա գործում են և ապահով են, որովհետև ըստ գործոյն՝ վարձ ունին որոշեալ քանակով և ժամանակով:

Եւ սա շատ բնական է. այսպէս և պէտքէ լինի. մի գործ որ արժանաւոր վարձ չունի, ոչ երկարարտև կլինի և ոչ բարեկարգ. իսկ գործավարը եթէ ըստ գործոյն չէ վարձատրուում, ոչ եռանդու կլինի և ոչ տոկուն գործող. եթէ ենթադրելու լինենք թէ գործը ինքն ըստ ինքեան շատ թեթև է և ամենացիւրին աշխատանք է միայն պահանջում, այնուամենայնիւ նա յառաջադիմութիւն, տևողականութիւն չի ունենայ, եթէ արժանաւոր վարձ չունի. ընդհակառակն եթէ գործը ծանր է և ամենաղժուար աշխատանք է պահանջում և սակայն արժանաւոր վարձ ունի, նա անշուշտ կյառաջադիմէ և յարատեռութիւն կունենայ:

Քահանայութիւնն ևս մի գործ է, ինչպէս և ուսուցչութիւնը, բժշկութիւնը, մշակութիւնը... և այլն.

բայց այդ գործը համապատասխան վարձատրութիւն չունի. քահանան ևս նոյնպիսի մի գործավար է, ինչպէս և բժիշկը, ուսուցիչը, մշակը և այլն. բայց քահանան անորոշ վիճակի մէջ է. նա եթէ և կամենայ բարոքել իւր ընտանեկան կեանքը, եթէ և կամենայ սահմանաւորել կենսական պահանջները, եթէ և հաստատուն մի ուղղութիւն կամենայ տալ իւր ընտանեկան կենցտղավառութեանը՝ այնուամենայնիւ նա կրծուարանայ, որովհետև չունի որոշեալ չափով և նշանակուած ժամանակով իրեն յատկացրած մի ոռճիկ. նա այսօր կարող է շատ ձեռք բերել, վաղը քիչ. միւս օրը բոլորովին ոչինչ. այսպիսի անորոշ և անկանոն տուրքից կամ արդիւնքից ի՞նչ պէտքէ ենթադրել, եթէ ոչ նոյնպիսի անորոշ կեանք և անհաշիւ ու անկարգ կենցաղավարութիւն:

Առարկութիւն կլինի թէ, բժիշկը որ ապահովուած է և նորա առջև շատ սիրով է համարւում վարձագինը, պատճառն այն է, որ բժիշկը ուսել է իւր առարկան, համապատասխան է իւր կոչմանը, նա յարցւում է և ուրեմն լաւ վարձատրւում. այնպէս է և ուսուցիչը և փաստաբանը, աշխատասէր մշակը և հմուտ արհեստաւորը. բայց քահանան համապատասխանում է իւր կոչմանը. նա ուսել է իւր քահանայական կոչմանը զոնէ անհրաժեշտ համարուած առարկան. նա շրջնում է իւր ժողովրդի տները իբրև հոգևոր հայր, իբրև բարոյական դաստիարակ. չէ՞ որ ըստ գործոյն և գործավար է հարկաւոր. քահանան համապատասխան է իւր ծանր և վսեմ գործին... և այն և այլն. նկատողութիւնը ըստ մասին իրաւացի է. բայց ո՞վ է մեղաւոր, դարձեալ քտհանայի դրութիւնը. ա-

նապահով վիճակ, անորոշ կենցաղավարութիւն. ումնէ է նախանձելի. ինչու փոքր ի շատէ կրթուածներն ու հանճարաւորները փախուստ են տալի այդ ասպարիզից, որովհետև ասպարէզը ինքնին նախանձելի չէ. եթէ առաջինք փախուստ են տալի՝ ասպարէզը մնում է յետիններին, ի՞նչ անենք. թող անձնագոհաբար մտնեն, տքնեն, ջանք անեն և ասպարէզը կմաքրուի. իրենք հեռու են մնում, իսկ ասպարէզը մնում է յետիններին։ Եւ այս է պատճառը, որ քահանայի և ժողովրդի մէջ տիրող անսախանձելել յարաբերութիւնները քանի գնում՝ սուր, անհամակիր և տիսուր կերպարանք են ստանում։

#### IV.

Քահանայի կոչման վսեմութիւնը.

**Մ**եր ժողովուրդը, թէ տգէտ, թէ լուսամիտ, թէ հարուստ և թէ աղքատ՝ շատ աննշան բացառութեամբ, շատ լաւ են հասկանում և քահանայի կոչմանը՝ և իրենցը. այսու հանդերձ շատ լաւ էլ գիտեն թէ նրապիսի յարաբերութիւնք տեղի պիտի ունենան այդ երկու դասակարգերի մէջ և նրապիսի փոխադարձ պարտակատարութիւնք են պահանջւում երկուստէք։

Ո՞ր ժողովրդական անհատը չգիտէ, բացառութիւնները մէկ կողմ, թէ քահանան և կրօնական

հանդիսի այն հոգեոր պաշտօնեան, որ իւր հոգեոր պաշտօնէութեամբ, իրան նայող, հետեւող և ունկնդիր ժողովրդին մատակարարում է հոգեոր պիտոյքներ. և քարոզում, ուսուցանում է Աւետարանական կենդանի և փրկարար խօսքը:

Քահանան և ժողովրդի ամենամօտ ըեկերը, բարեկամը և վերջապէս հոգեոր հայրը, որ ցաւակից է ժողովրդ՝ յաւերին, և ուրախակից՝ նորա յաջողութեան, առողջութեան և առհասոարակ բոլոր ուրախութեանց. նա է ժողովրդի թէ ուրախ և թէ տիսուր երեյթների իրագործման անկասկածելի միջնորդը՝ ըստ առաքելական բանին. «Ո՞ հիւանդանայ՝ և ոչ ես հիւանդանամ. ո գայթակղի և ոչ ես տապանամ. ուխտիք ինդրէի ես ինքնին նզով լինիլ ի Քրիստոսէ վասն եղարց իմոց և ազգականաց ըստ մարմնոյ»:

Քահանան և այն համակրելի անհատը, այն պատկառելի անձնաւորութիւնը, որին վստահանալով ժողովուրդը՝ բաց է անում նորա առաջ իւր կրօնական—հոգեոր և աշխարհային մարմնաւոր բոլոր ներքին զգացմունքները, խոստովանութիւնք, և հոգւոյ ամենատեսակ տրամադրութիւնք. յուսալով նրանից լսելու և ստանալու այդ ամենայնի բուժիչ և ապաքինիչ բոլոր միջոցները:

Քահանան և այն ծանր պատասխանատու անձնաւորութիւնը, որը ուխտել է տալ հաշիւ Աստուծուն, խղճին և հասարակութեանը՝ ժողովրդական ամեն մի անհատի մահացու և ներելի պարտազանցութեանց մասին:

Մի իրական օրինակով հաստատենք վերոյիշեալը — Մի քահանայորդի, որը երկար ժամանակ եկեղե-

ցական ստորին պաշտօնէութամբ ծառայելով Աստուծոյ տաճարին, իւր արժանիքը երաշխաւորել էին նորան՝ ի քահանայութիւն՝ և տեղական եպիսկոպոսը ամենայնիւ վստահ նորա արժանեացը, երեկոյեան ժամերգութեանը կոչում տուաւ նորան, միւս օրը՝ ի կարգ քահանայութեան ամբառնալու մտօք, միւս առաւօտ յայտնուում է — թէ քահանայացուն չկայ, փախել է. ի հարկէ խափանուում է Ս. Պատարագը, ուրովիետև ձեռնադրուողը չկայ: Մի քանի ժամանակից յետոյ յայտնուում է նա. տանում են նորան Եպիսկոպոսի մօտ. որի հարցմանը — թէ ինչո՞ւ է փախել. պատասխանուում է. «Սրբազն հայր. այս գիշեր ես մի այնպիսի երազ տեսայ, որ թէև երազ՝ սակայն ինձ վերայ այնպէս ազգեց՝ որ ոչ միայն չեմ կարող վստահանալ յանդզնել ի քահանայութիւն՝ այլ այսուհետև անպայման պիտի խոնարհիմ յոտս քահանայից և անհուն ակնածութեամբ և յարգանօք պիտի պաշտեմ այդ՝ ժողովրդի մեծ պարտապանին, ծանը պատասխանաւուին»: «Ի՞նչպէս». հարցնում է սրբազնը. «Սրբազն հայր». շարունակում է ընծայացուն, «Ես հօրս տեսայ երազումս. նա զգեստաւորուած էր իբրև պատարագիչ. շալակած ունէր մի մեծ և լիքը ջվալ. նա բարձրանում էր մի սանդուխով, որի ծայրը հասնում էր երկինք ու էլ չէր երկում. ես սարսափահար վազեցի թէ հօրս օգնեմ. նա ինձ ասաց. «Ճեռու կաց որդի. քո բանը չէ». հարցրի. «այդ ի՞նչ ես շալակել հայրիկ», պատասխանեց. այս իմ ժողովրդի մեղքերն են, որոց համար երաշխաւոր եմ եղած Աստուծոյ առաջ, ինչպէս երաշխաւորել եմ՝ այնպէս և հաշիւ ու պատասխան պիտի տամ Աստուծուն ըստ երաշխա-

ւորութեանսա։ Յետոյ սկսաւ բարձրանալ. Սրբազն հայր. ինչ նեղութեամբ էր բարձրանում... մի՞թէ կարելի է պատմել—շուրջառի, ժամաշապկի, իւր կապայի քղանցքները անդադար ոտի տակն էին ընկնում. երբեմն մի ձեռքով ջվալի բերանն ու սանդուխի ափը և միւս ձեռքով փեշերը բռնած էր բարձրանում, իսկ սաղաւարտի տակից քրտինքը ծորում էր երեսի, ականջնեւ՝ լուայ. երբեմն էլ հանգստանում էր, հոգւոց էր հանում և ասում. «փառք քեզ Աստուած, որ արժանացնում ես ինձ կանչել քեզ մօտ՚ի հաշուետութիւն ժողովրդիս մեղքերի»։ այս որ տեսայ՝ էլ նայել հօրս չկարողացայ և ուշագնաց ընկայ. Զարթեցի և տեսայ որ երազ էր. բայց այնպէս սոսկացի, ամբողջ մարմնիս մի օրհասական սարսուռ տիրեց. ջերմեցի երկիւղիցս ու փախայ. մտածում էի—մի՞թէ կարող եմ ես ժողովրդի մեղքերի պատասխանատւութիւը վրաս առնել. ոչ, ոչ. իմ մեղքերիս պատասխանատւութիւնն էլ ծանր է ինձ համար, ուր թէ ժողովրդինը։ Այս է պատճառը, Սրբազն հայր, որ ես այսպիսի մի քայլ արի, այժմ ամենախոնարհաբար ինդրում եմ—ներեցէք ինձ անկարգ վարժանս համար, ես անկանոն շարժուեցայ, որ նախապէս Զեզ չյայտնեցի. բայց ահաբեկուած էի, սարսափած էի. կանոնաւոր վարուելը իսպառ մոռացայ։ Սրբազնը գովեց նորա պարտաճանաչ սիրու, ազնիւ հոգին, արթուն խիղճը և օրհնելով արձակեց նորան։

Երբ արարած մարդը դեռ նոր է բաց անում աչքերը ընդարձակ տիեզերքի անսահմանութեան մէջ՝ նա բնութեան անօրինակ հրաշալեաց ճակատին կարդում է Ամենակարող Զեռքի. Սքանչելի Արտադրու-

թիւնը, և այդ Արտադրողի անունը՝ նա Ստեղծող և Արարիչ է լսում ու սովորում. և այնուհետև ամենայն ակնածութեամբ և երկիւղիւ խոնարհում է այդ Աներեոյթ՝ բայց իւր Սքանչելի Զեռակերտի մէջ լուսափայլող Արարչի առաջ, պաշտում է նորան և ասում է Պրուդոնի և Ռուսսոյի խօսքերը. «Զարմանալի է, որ ամեն բանի տակ Աստուածաբանութիւն է ծածկուած»։ (Պրուդոն). «Որքան աւելի եմ ձգտում կամ աշխատում ճանաչել Աստուծոյ իսկութիւնը կամ ճշմարտութիւնը, այնքան նուազ եմ ըմբռնում կամ հասկանում. բայց այս ևս շատ է ինձ, որ նա կայ. բանի նուազ եմ հասկանում կամ ըմբռնում՝ այնքան աւելի երկրպագնում եմ նորան. իոնարհեցնեմ ես ինձ և ասեմ նորան. Ո՛վ Արարիչ Աստուած բոլոր արարածների, ես կամ՝ որովհետև Դու կաս. իմ մտաւոր և հոգեոր բարձրութիւնն այն է՝ որ միշտ Քեզ վրայ մտածեմ, իմ բանականութեան ամենալաւ կենցաղավարութիւնն այն է՝ որ ինձ ոչինչ համարեմ Քո առաջին, իմ հոգւոյ հիացումը և իմ տկարութեան սխիթարութիւնն այն է՝ որ ինձ ընկճուած տեսնեմ Քո մեծութիւնից» (Ռուսսօ)։ Արարչի այդ Սքանչելի Զեռակերտի Ստեղծագործութիւնն ու Խնամարկութիւնը ժողովրդին ուսուցանողն է Քահանա։

Հիւանդին կամ մահուան անկողնում ընկած անդամալուծին, որը պատրաստում է տալ իւր անդամնալի բաժանման վերջին հրաժեշտը՝ սիրելիներին, հարազաներին, վերջապէս ցանկալի կեանքին ու աշխարհին՝ հարազատաբար յուսագրողն ու միսիթարողն և երկնային յուսով ճշմարտապէս պարալողն է Քահանա։

Վշտացածի, զրկուածի և աշխաղնային բիւրա-  
տեսակ հոգսերով դառնացած, յուսահատուած, ան-  
միխթար ու թշուառ վաստակաւորների ու բեռնա-  
ւորների ողբալի ու ցաւալի վիճակն ու դրութիւնը  
մեղմացնողն ու թեթևացնողն է՝ Փահանական Աւե-  
տարանական քաղցրաձայն սրնզի անուշալուր հաջիւ-  
նով:

Մարդկայիս վեանքի և փրկական աշխարհի առաջին աստիճանի վրայ նորածին երեխայի գողգոջուն ուղերը զնողն ու ամբափնդողը. և Հաւատով, Յուսով ու Սիրով Երկնաւոր Հօր՝ Որդեգրութեանը, արքայութեան ժառանգութեանը, Քրիստոսի եկեղեցւոյ Զինորութեանը և Սուրբ Հոգւոյ Տաճարանալուն պատրաստողն ու հասցնողն է Քահանան Ճոհանիալարատէր Ծիսակատարութեամբ և սուրբ Մկրտութեան փրկարար խորհրդով. և Սուրբ Հոգւոյ Շնորհօք սպառագինողն է դարձեալ նոյն Քահանան խորհրդովն Դրոշմի:

Յանցանքի, մեղքի և պէս պէս պարտազանցութեանց մահաթոյնը շրթունքներին մօտեցնող անառակ որդւոյ փրկիչն է նոյն Քահանան Ապաշխարութեան և Հաղորդութեան փրկարար Խորհրդոյ մատակարարմամբ:

Յետ ժամանակաց նորա ամուսնական և ընտանեկան կեանքի երջանկութիւնն ու բարօրեալ վիճակը սկսողն ու անբաժան յօդերով միաւորողն ու հաստատողն է—Քահնանան, Պատկի կամ Ամուսնութեան ազատական խորհրդու մատակարարմամբ:

Միով բանիւ Արարչի, 'ի պատկեր իւր Ստեղծագործեալ, բանական արարածի երկրաւոր կեանքի մէջ

ընդունողը, նոյն կեանքի մէջ հոգևորապէս խնամար-  
կողը և յետ երկրաւոր կենաց խորհրդով Վերջին օծ-  
ման, գէալի երկնային կենքը առաջնորդողն է — Առյա  
Քահանան:

Փողովրդի և քահանաւի սարն սպառեսութեանը աստիճանները,

Այս Քահանան է ահա, որից փարսախներով  
հեռու է շրջում ժողովսւրդը, ոչ նորա օգնութեանը  
պատշաճաւոր դիմումն անելով ոչ նորան արժանա-  
ւոր յարգանքը տալով, և ոչ նորան մօտաւորուելով,  
ոչ ընտանենալով և ոչ կարեկցելով ու օգնելով:

Արդ՝ տեսնենք այժմ մի քանի տիսուր երկոյթ-ներ, անմերձենալի հեռաւորութիւններ, սառն և անհամակիր յարաբերութիւններ նոյն փահանայի և նորա հովտութեանը լանձնուած հօտի մէջ:

Վերոյիշեալ սուրբ և վսէմ պարտաւորութիւնները կատարող քահանան գիտէք երբ իրաւունք ունի մանելու իւր ժողովրդի տունը՝ երբ վերջինս կարևորութիւն է տեսնում նորա մէջ հոգեսոր ծխակատարութեանց, սրբազն արարողութեանց և .խորհրդակատարութեանց ժամանակ:

Ժողովրդի հարուստ կամ բարձր դաստեղաբեկ  
տունը քահանան մտնում է անհամարձակ։ Այդ դա-  
ստեղաբեկի վարմունքը և յարաբերութիւնը դեպի իւր  
քահանան աւելի իշխանական, հրամայական է, քան

թէ ծխական, մտերմական և, որ իսկը պրտի լինի, որդիական։ Այս դասակարգի շարժմունքը, վարմունքը և խօսակցութիւնքն առհասարակ աւելի արհամարհական են, կարելի է ասել, դէպի քահանան՝ քան թէ համակրական կամ յարգական։ Քահանայի դրութիւնը այս դասակարգի մէջ աւելի ծառայական—ստրկական է քան թէ ազատական։ Քահանան մտնում է այս դասակարգի տունը ոչ իբրև հայր կամ բարեկամ, այլ իբրև մի չինովաճիկ, որ իւր պաշտօնը պիտի կատարէ։ և նամից յետոյ ոչինչ առընչութիւն չկայ իւր և ժողովրդի մէջ։ և եթէ պատահէ՝ որ քահանան համարձակուի նորա իշխանական—տիրական հրամանները ճշտիւ չկատարել՝ այն ժամանակ աչքդ բարին տեսնէ։ կամ քահանան պիտի հրաժարեցնուի և կամ յարաբերութիւնները այն աստիճան դէպի չարը պիտի փոխուին՝ որ աւելի լաւ է քահանան ինքը հեռանայ նոյն տան հովութիւնից։ Վերջապէս, 'ի մի բան ասելով, ժողովրդի այդ դասակարգը չէ չսկրում, չէ յարգում, չէ համակրում իւր քահանային իբրև իւր տան հայր և բարեկամ, այլ լոկ՝ իբրև պաշտօնեայ։ և այդ է պատճառը՝ որ քահանան կարօտ է մնում իւր կեանքում մի օր, գէթ մի ժամ նստելու իւր այդ հարուստ կամ իշխան կամ կրթեալ ժողովրդի տանը և խօսակից լինել նորան։ Այդ դասակարգը սովոր է պահանջել քահանային այն ժամանակ՝ երբ հարկը ստիպում է։ և պահանջելով նորան՝ պատութերում է զնալ Կոնսիստոր եւ հանել իւր որդույ համար ծննդական վկայականներ, վերցնել պատկի հրաման, տալ քաղուածք կամ պատկի, կամ մահուան։ Ինքը՝ այդ դասակարգը ափսոսում է իւր ժա-

մերը, կարծես քահանայի ժամերը վիոդոցումն են քուսած։ և կամ արժան չէ համարում ոտք դնել Կոնսիստորի շէմքը և անձամբ ստանալ իւր ցանկացած վկայաթղթերը, նորա զործակատարն է ինեղձ քահանանաւն։ որ փոխանուկ հովութիւն անելու՝ ինքն է ոչխարանում իւր ոչխար—հովուի դագանակից վախելով։ Քահանան իրաւունք ունի մուտք գործել այդ դասակարգի տունը այն ժամանակ՝ երբ պահանջում իրան Մկրտելու, Պատկելու, Թաղելու և այլն։

Արտաքոյ այս և այսպիսի հանգամանքների՝ քահանան մնում է հեռու այդ դասակարգից և անմերձենալի նորան։ Եթէ պատահամամբ հանդիպում է քահանան այդ դասակարգին փողոցում և կամ այլուր՝ շատ յաճախ քահանայի ողջոյնն իսկ մնում է անպատասխան։ կամ այնքան սառն ու պաշտօնական՝ որ անպատասխան մնալուն է զլեթէ հաւասար։

Ժողովրդի միջին կամ աղքատ դասակարգերի տները քահանան մտնում է վստահաբար, որովհետև փոխադարձ յարգանք է վայելում այդ դասակարգերից։ Սակայն և այստեղ պակաս չէ իսկական, օրինական և պատշաճաւոր յարաբերութեանց խանգարիչ քարը։

Ժողովրդի այդ դասակարգերը իրենց քահանայի մէջ, եթէ չասեմ տեսնում, գէթ կամենում են տեսնել՝ թէկ ըստ մասին քահանայ, այլ ըստ մաշմացեալ հասկացողակից իւրեանց՝ ընկերակից և զործակից իրենց հազար ու մի աշխարհային անսերելի կենցաղավարութեանց, որոնք պատուաբեր չեն քահանայական կարգին։ Նորա պատրաստ չեն և չեն իսկ ընդունակ, խօսք բացառութիւններին չէ վերաբերում, տեսնել քահանայի մէջ ընկերակից և գոր-

ծակից սուրբ, օգտակար, արդար և առաքինի կենցաղական պայմտնների մէջ. այլ լոկ աշխարհասէր, շոայլ, զեխ և անքարոյական կենցաղավարութեան մէջ: Նոքա չեն կամենում տեսնել իրենց քահանայի մէջ մի պատկառելի, սուրբ և նուիրական անձնաւորութիւն՝ որը պիտի ընդունուի իրանցից իրեւ հոգոր հայր, եղբայր, բարեկամ և դաստիարակ. որի գաղափար՝ կեանքը՝ օրինակ և հեղինակութիւն պիտի համարեն իրենց կենքին: Նոքա սպասում են որ քահանան իրենց հետ պարապոյ ժամեր անցկացնէ կերուխումներին, թղթախաղերին, բամբասանքներին, դաւազրութիւններին և սոցա նման զագիր ու դարշելի կենցաղական գեղխութիւններին մասնակցելով, և այս է պատճառը՝ որ նոքա զգում ու դարշում են այն քահանաներից՝ որոց խօսքը, վարմունքը և համակ կենցաղավարութիւնը՝ լուրջ է, խրատական է, համեստ է և իսկ քահանայական է. այդ դասակարգի ճակատը կնճուռում է և դէմքը այլայլում՝ երբ կըրթիչ խօսք են լսում իրենց քահանայից. որովհետև սովոր չեն քահանայի մէջ այդ արժանիքը տեսնելու:

Եւ այսպէս առաջին դասակարգին չէ կարողանում մօտենալ քահանան. իսկ միջին և վերջին դասակարգերից ստիպուած է հեռանալ քահանան. բայց որ քահանան՝ պարտաճանաչ քահանան:

Այս այսպէս լինելուց յետոյ, չէ կարելի ծածկել և շաստովանել մի ճշմարտութիւն—որ ժողովրդի միջին դասակարգը, համեմատաբար, աւելի պարտաճանաչ է իւր, դէպի քահանան ունեցած, յարաբերութեանց մէջ, քան թէ առաջին և վերջին դասակարգերը:

VII.

Ժողովրդի անարդական վերաբերմունքը դէպի օրինակատարութիւններն ու օրինակատար քահանան:

Մադ երեք դասակարգերի յարաբերութիւններից մի քանի օրինակներ յառաջ բերենք—պատահում է Պասկ. և դուք վերջին դասակարգի պստկադրութեան ժամին խաղաղ հոգւով չէք կարող ներկայ լինել Աստուծոյ տաճարում. նոցա հայհոյանքները, աղաղակները, կոփը, հանաքները, մասիմարութիւնները, մինչեւ անգամ իրար գլխի խփելը և այլն և այլն. Խլացնում են Աստուծապաշտութիւնը և քահանան ստիպուած է լինում ընդհատել սուրբ խորհրդակատարութիւնը և զգաստութեան հրաւիրել ժողովրդին: Առաջին դասակարգը այս պակասութիւնից գերծ է, բայց նրա ունեցած պակասութիւնն էլ սրանից թեթև չէ. նա էլ ստիպում է քահանային—որ խորհրդակատարութիւնը կրճատէ, յորդոր ասէ, շուտ աւարտէ. թէ շոք է՝ շոքի պատճառաւ, թէ ցուրտ է՝ ցըրը պատճառաւ. որպէս զի թէ իրենք և թէ քնքոյշ խօսեցեալները չշոքեն կամ չմրսեն: Միջին դասակարգը զերծ է յիշեալ երկու պակասութիւններից ևս:

Պատահում է Մկրտութիւն. վերջին դասակարգի մէջ—կնքահայրը նախապէս մկրտուած է կամիր ջրով. և ինչ պիտի լինի նորա տուած երաշխառութիւնը մկրտելի երեխայի հաւատոյ, յուսոյ և սիրոյ դաւանութեան մասին: Առաջին դասակարգը սրանից

զերծ է. բայց նորա կնքահայրն էլ կամ հայերէն չըդիտէ և կամ երեխայ է հասակաւ. և որ կարի ցաւալին է՝ այս դասակարը սովորութիւնն է արել իրեն՝ պահանջել—որ մկրտութիւնը տանը կատարուի. պատճառաբանելով, որ շատ անգամ սուտ է լինում, թէ երեխան տկար է. իսկ տանը մկրտութեան ժամին և ծխում են և խօսում. որ անպատեն է խորհրդի սըրբութեանն ու վեհութեանը։ Միջին դասակարգը թէն սրանից զերծ է, բայց ոչ բոլորովին։

Պատահում է զերեզմանօրհներ. վերջին դասակարգի յարաբերութիւնն ու վարմունքը այս հանգամանքում քան զչափն գայթակղեցուցիչ է. նա կանգնած իւր մեռեալի շիրմի մօտ՝ հրաւիրում է քահանային հեռուից անպատշաճ ու տգեղ աղաղակով. և երբ ժողովրդից մէկը քահանային առաջնորդում է դէպի իւր հարազատի շիրիմը օրհնել տալու՝ նա ևս հրաւիրում է զբաղուած քահանային. մերժման դէպքում բաց է անում բերանը և էլ ձեռնազրող, էլ ընտանիք, էլ հաւատ՝... և այն և այն. անխնայ հայոյում և աններելի յիշոցներով անուանարկում է զբաղուած քահանային. և այդ անում է նա կանգնած իւր մեռեալի շիրմի մօտ, որ եկել է օրհնել տալու և նորա հոգին յիշելու։ Այս գայթակղեցուցիչ և վրդովիչ պակասութիւնից զերծ են առաջին և միջին դասակարգերը։

Կառարկեն թերևս—թէ նոքա զերծ են, որովհետեւ նոցա տուած զերեզմանօրհնէքի տուրքը անհամեմատ շատ է. իսկ վերջին դասակարգի տուածը՝ սակաւ։ Առհասարակ վերցրած՝ սիալ է, որովհետեւ շատ անգամ քահանային յայտնի էլ չէ տալիք տուրքի քա-

նակը, բայց ի մասնաւորի՝ ճշմարիտ է որ կամ ոմանք մեզանից, որ 'ի վերջին առարկութիւնն հային։ Բայց բացառութիւններին չէ պատկանում մեր նկատողութիւնը։

Այս՝ առհասարակ յարաբերութեանց նկատմամբ. այժմ խօսենք քահանայի և ժողովրդի նիւթական յարաբերութեանց մասին։

Եւ նախ մտնենք Ծկեղեցի։

Բազմաթիւ զերդաստանի հայր՝ քահանան, խաչանիշ օրհնութեամբ թողնելով տանը իւր ընտանիքն ու որդիքը, աղօթքը բերանն առած՝ առաւոտեան հինգ կամ վեց ժամին դիմում է եկեղեցի, որպէս զի աղօթէ գեռ ևս անկողնում քնած, կամ արթուն և երենց արհեստին ու մշակութեանը շտապող, կամ 'ի ծովու և 'ի ցամաքի ճանապարհորդող, կամ հիւանդ, բանտարկեալ և հոգեպէս ու մարմնապէս վշտացած վաստակաւոր ժողովրդի համար. որպէս զի Ամենախնամն Ասաւուած ամենքին էլ համնէ իւր բիւրատեսակ խնամքներով. և ահա նոյն քահանան, ըստ Առաքելական պատուիրանի. «Եթէ մեք 'ի ձեզ զնոգեորն սերմանեցաք, մէ՞ծ ինչ իցէ եթէ 'ի ձենջ զմարմնաւորն հնձեսցուք»։ օրապահիկ տուրքի թեփշին ձեռքն առած «Փառք ի բարձման» և Աշխարհգալոցին» կամ «Գոհութեանը» սկսում է շրջել հաւատացեալների մէջ իւր զերդաստանի համար հացագին հաւաքելու. բայց եկեղեցին դատարկ է հաւատացեալներից. եղածներն էլ կամ ոչինչ չեն ձգում և կամ թողնում են եկեղեցին և շտապում են դուրս գնալ, որովհետեւ նոքա զիտեն գանձանակաշրջման ժամանակը, երեսը ամօթից կարմրած խեղճ քահանան աւարտելով ժո-

զովարարական գէրը՝ վերադառնում է իւր տեղը շատ աննպաստ արդիւնքով—առ առաւելն ոռւբլուն չհասած կոպէկներ է հաւաքել, որը պիտի կազմէ երեք, չորս կամ հինգ քահանայի հացագին։ Կարմրում է, ասացի, ժողովարար քահանայի երեսը, ինչու, որովհետև խեղճ քահանան զգում է—որ ժողովուրդը տըրտնջալով ու դժգոհելով է տալիս այդ տուրքը, պատճառաբանելով թէ գանձանակի շրջեցումը խանգարում է նոցա ունկնդրութիւնը և առհասարակ՝ շփոթում է Աստուածապաշտութիւնը։ Եւ քանի քանի անգամ ինքնարերաբար դուրս են եկել ժողովրդի բերանից, ուրանի վերջանար այս տգեղ սովորութիւնը և ոռճիկ սահմանուէր քահանայից համար և այլն և այլն այս իրաւացի խօսքերը։

Մտնենք տուն։

Պատահում է Պսակ։ Պսակատէր ժողովուրդը հարսանեաց պատրաստութիւնը շատ առատաբար է տեսել, ոչինչ պակաս չէ. աւելի է քան թէ պակաս, շուայլ է քան թէ չափաւոր։ Այստեղ քահանան ժամերով նստում է միայնակ, ինչու միայնակ, որովհետև եթէ պսակատէրը առաջին դասակարգին է պատկանում՝ պարերն ու թղթախաղերը չեն թողնում ոչ ոքին մօտենալ և ընկերել քահանային։ թէ պսակատէրը վերջին դասակարգին է պատկանում՝ նրա տանն էլ քահանան դատապարտուած է միայնութեան, որովհետև պարերը, թղթախաղն ու զումարը զբաղեցրել են ամենքին։ թէ պսակատէրը միջին դասակարգին է պատկանում՝ այն ժամանակ թէ կ դարձեալ կան նոյն յիշեալ զբաղմունքը՝ բայց և այնպէս և քահանային կան յիշողներ ու զբաղեցնողներ։ Եւ

այսպէս միայնութեան դատապարտուած քահանան, որի ընկերն ու խօսակիցը՝ մտածութիւնն է, կարծես փշերի վերայ է նստել և ըոպէներ է համարում, թէ Երբ պէտքէ աւարտէ իւր հոգեսր պարտքը որ հանգիստ առնու իւր գերդաստան մէջ։ Այսպէս սպասելով՝ համնում է վերջապէս ցանկալի ժամը, և օրհնելով խօսեցեալների հալաւն ու նշանը՝ տանում է եկեղեցի։ ուր Պսակադրութեան խորհուրդը աւարտելուց յետոյ տուն է բերում նորապսակներին։ վերջին օրնութիւնն ևս տալիս է. այնուհետև սկսում են շնորհաւորէքներ ու բաւականութիւնք. իսկ քահանան մոռացուած է իսպառ, որովհետև աւարտեցաւ կարևոր։ Այժմ գիշերուայ չորս, հինգ ժամերով ընտանիքը միայնակ թողնող քահանան կանգնած է, չգիտէ գնայ՝ թէ համարձակուի ծպտուն հանել իւր վարձուց մասին։ Ի՞նչ դրութիւն...։ Վերջապէս գտնուում են պարտաճանաչ ոմանք, որոնք արժանաւոր վարձատրութեամբ փոխարինում են իրենց քահանայի գիշերային չարչարանքն ու անհանգստութիւնը։ իսկ ոմանք ապառիկ թողնելով՝ ստիպում են քահանային, ողորմութեան քսակն առած, շաբաթներով ու ամիսներով թափառել իրենց ետևից և իսպառ անամօթանալ մի քանի արծաթ վարձուց համար։ իսկ ոմանք տարիներով ուշացնում են վարձուց տւչութիւնը և գնում է ՚ի յաւիտենական մոռացօնս։

Պատահում է ՆԱՅԱԳԵՆԱՐ. Երեք օր շարունակ քահանան թողած իւր գործերը՝ ննջեցելոյ տէրերի մէջ պիտի շշէ. իսկ թաղման օրը, առաւօտեան ինն ժամից սկսեալ մինչև երկու կամ չորս ժամը զկնի ճաշուն, իւր տանից բացակայ՝ ժողովրդի տանը պի-

տի լինի. իսկ յուղարկաւորող քահանայք երկու, երեք ամբիծքներին ներկայ լինելուց յետոյ, թաղման օրը ինն ժամից մինչև երկու ժամը, հինգ ժամ գործերը թողած՝ ննջեցելոյ դին պիտի պատուեն թէ արև և թէ անձրև, շուրջառները ծածկած՝ տանից եկեղեցի, եկկեցուց հանգստարան, անդադար երգելով, քըրտնքից ու թողից խեղդուելով, անձրեցից ու քամուց ծեծուելով, յ՛լ՛լ՛ աղտոտուելով՝ ննջեցելոյ զագաղի առաջից պիտի գնան զլխարաց մինչև գերեզմանատուն։ Քանի ժամուայ և հրպիսի չարչարանք, բայց ի՞նչ վարձատրութիւն—երեքից մինչև, առ առաւելն, չորս կամ հինգ արծաթ, այս ևս ապահով և հարուստ ժողովրդից. իսկ անապահով և հասարակ ժողովրդից՝ առ առաւելն մէկ կամ երկու արծաթ և կամ ոչինչ։ Ծխատէր քահանային պարտաճանաչ ժողովուրդը արժանաւոր վարձատրութեամբ մխիթարում է, իսկ անպարտաճանաշների վարմունքը նոյնն է՝ որ ինչ Պսակադրութվան հանգամանքում։

Այս երեքը—ջանանակադրամը, Պսակադրամը եւ Թաղմնան, որ քահանայի վիճակը փոքր 'ի շատէ ապահովող արդիւնքներն են, այս չափով և այս ձեռով են տրում՝ ի՞նչ ասենք երկրորդական արդիւնքների մասին. ոչինչ չենք կարող ասել, բայց եթէ համակերպուել Յիսուսի խորհրդաւոր խօսքերին թէ. «Եթէ ընդ փայտ դալար զայս առնեն. ընդ չորս զի՞նչ լինիցի»։ Եթէ արդիւնաւոր և նշանաւոր օրինակատարութիւնները այս չափով են վարձատրում քահանային՝ ապարդիւն և աննշան օրինակատարութիւններից ի՞նչ սպասէ խեղճ քարանան։

Ահա այս և այսպիսի հանգամանքները, որ վերը

յիշուեցան, պատճառ են դառնում քահանայի և ժողովրդի մէջ պժգալի, արհամարհական, անհամակիր և ատելի յարաբերութեանց առաջանալուն։

Ժողովրդի պահանջը քահանայից, առ հասարակ, խիստ է և չափազան. իսկ ըստ պահանջին չկայ համապատասխան վարձատրութիւն. և այս հանգամանքը շատ յաճախ է կրկնուում ժողովրդի ու քահանայի փոխադարձ յարաբերութեանց մէջ. եթէ ըստ պահանջին վարձատրութիւն լինէր՝ շատ չարիքների առաջն առնուած կլինէր։

Յիշեալ մէջ բերած տխուր երևոյթները, որոնք պատճառ են դառնում ժողովրդի և քահանայի անհամակիր յարաբերութեանց, էին ժողովրդի կողմից։

## VII.

Քահանաներիս պարտազանցութիւնները՝ առաջնորդող պատճառներով.

**Պ**արտք է մեզ սեպուհ՝ յիշել նոյնպիսի տխուր երևոյթներ նաև քահանաներիս կողմից։

Արդ՝ ժողովրդի մշտական գանգատները կայանում են նրանում—թէ արժանառոր քահանաները ըռանեն, քահանաների ընթացքը, վարմունքը անհարդ են ու անկանոն են ո՛չ քահանանալայել, քահանայը միմևանց հետ ընկերուական յարաբերութիւնները ըռանեն. այլ թշնամական և նոցա յարաբերութիւններ

— Առքա միմնանց վերայ բամբասում են, միմնանց չարախօսում են, մատնում են թէ ժողովրդի եւ թէ Հոգեւոր իշխանութեան առաջ, ծխայափշտակութեամբ են պարապած, կողմնակի տգեղ զքադմունքներ ունին՝ որոնք բնաւ պատռարեն չեն իրենց հոչման վեմութեամբ... և այն և այն:

Ժողովրդի գանդատները, մեր—քահանաներիս նկատմամբ, ծշմարիտ են և արդարացի. բացառութիւնները մէկ կոմը թողնելով: Եթէ ժողովրդի պակասութիւնը՝ 'ի նկատ առնուեցաւ՝ ինչու մերը լոռութեամբ անցնենք ու մեր սուրբ և բարձր կոչումը արատաւորող թերութիւններն ևս չնկատենք:

Եթէ ժողովրդին լսենք ու հաւատանք՝ առ ժամ մի պիտի համոզուենք—նախ՝ որ արժանաւոր քահանաներ չունենալու պատճառը՝ է Հոգեւոր իշխանութիւնը. բայց այս մասին կիսուենք իւր տեղում. երկրորդ՝ որ քահանային իրանց տանից հեռու պահելու, իրանց չընկերացնելու, իրենց հասարակութեան մէջ չընդունելու, մինչև իսկ եկեղեցի չյաճախելու պատճառը մենք քահանաներս ենք մեր անկարգ ու անկանոն ընթացքով, անպատեհ խօսքով ու վարմունքով, միմեանց հետ ունեցած մեր տգեղ յարաբերութիւններով և շատ եւ...երով:

Ես թէս ժողովրդի առ քահանայս ցոյց տուած անհամակիր վարմանց նկատմամբ ըստ կարելոյն տուի իմ բացատրութիւնը, մեղադրելով ժողովրդին՝ սակայն մեր մասին ևս լոելն անկարելի է. և եթէ ես լոեմ՝ քարինքն կաղաղակեն ժողովրդի գանդատների, ըստ մասին, արդարացի լինելու նկատմամբ:

Եւ եթէ ընդունենք՝ թէ ժողովրդի և քահանա-

ից մէջ եղած անհամակիր յարաբերութեանց առաջնորդող պատճառները մեզ—քահանաներիս է վերագրելի՝ այնու ամենայնիւ չէ կարելի ուրանալ՝ որ նոյնքան էլ ժողովրդին է վերագրելի և ժողովրդով՝ Հոգեւոր իշխանաւորներին:

Դոյնպիսի յարաբերութեանց սկզբնավատնառն է ժողովրդը՝ որ քահանայ է պահանջում և պիտի տրուի նորան անպատճառ. երկրորդ պատճառն է բահանան՝ որ ներս է սպրդում եկեղեցի իրեկ ստորին սպասաւոր և բազմամեայ պաշտօնավարութիւնից յետոյ՝ դիմում է 'ի քահանայութիւն, յետեկից ժողովրդի մի լէգէօն քաշ տալով՝ 'ի միջնորդութիւն. երրորդ պատճառն է Հոգեւոր իշխանութիւնը՝ որ զիջանելով ժողովրդի միջնորդութեանը և քահանայի կարեւորութիւնները՝ տալիս է ժողովրդին քահանայ:

Սյդ ժողովուրդը, որ քահանայ է պահանջում երան հովուելու, իւր հոգեւոր պէտքերը լցուցանելու՝ ինչու իւր ընտանիքի մանուկ անդամների—երեխաների կրօնի եւ մայրենի շեզուի դասախութիւնը յանձնում է աշխարհականին եւ ո՛չ տան բահանային:

Պատասխանում է ժողովուրդը—որովհետեւ նախ՝ որ քահանայք, մեծ մասամբ, պատշաճաւոր գիտութիւն չեն ունենում կրօնի և Մայրենի լեզուի. երկրորդ՝ որ նրանց իրար հետ ունեցած յարաբերութիւնները պախարակելի են. երրորդ, որ լաւ անուան ու վարկի տէր չեն և չորրորդ, ցաւ՝ 'ի ոիրա պէտքէ ասել—որ դպրոցներում մեր որդիքը իրանց ընկերներից շատ աննպաստ համբաւներ են ստանում այս ու այն քահանայի պարտազանցութեանց մասին, մինչև

իսկ կրօնուսոյցների. էլ չենք յիշում ծածկեալ ախտագործութիւնք. որոնց մասին, 'ի հարկէ, ոչինչ չէ կարող իմանալ դպրոցական սահնը: Այս այսպէս լինելուց յետոյ՝ որ արդար իրաւունքով մենք կարող ենք փստահանալ մեր մանուկ և անփորձ երեխաներին հաւատալ նոցա հեղինակութեանն ու կրթութեանը:

Ուրեմն ժողովուրդը հասկանալով և իմանալով քահանայի յայտնի և ծածկուկ, անկարգ ու անպատիւ, անկանոն ու անպատեհ կենցաղավարութիւնը՝ բնական է—որ դրանից յետոյ չէ ընդունելու քահանային իւր ընտանիքի մէջ իբրև հայր կամ բարեկամ և կամ որդւոց դաստիարակ:

Եւ նվ է ժողովրդին հասկացնողը, յայտնողը քահանայի կատարած զանցառութիւնքը՝ ժողովն ուղղը. զուցէ թէ ժողովուրդը, ըայց շատ սակաւ. իսկ նվ զիսաւորապէս՝ զիսաւորապէս քահանաներս, այն քահանաներս. իսկ ի՞նչն է դորա շարժառիթը. նախ՝ դիւական հոգին, երկրորդ՝ անապահով վիճակը և դրանից յառաջացած ծխայափշտակութեան տեսչը. և երրորդ անկրթութիւնն ու անդաստիարակութիւնը:

Ապրել ցանկացող աղքատը, մանաւանդ եթէ զուրկ է ազնիւ դաստիարակութիւնից, ուրիշ կերպ չէ կարող վարուել, ըայց եթէ փծուն ու գարշելի պտոյտներով սողալով, վարկն ու համարումը ոտնահարող զրպարտութիւններով ու բամբասանքներով, քսու և փարիսական ցոյցերով ու վարմունքով, փեշի տակը մտնելով և այն և այն:

Սրանից յետոյ հարցնում է նոյն ժողովուրդը— ում պարտականութիւնն է հոկելու քահանաների այս օրինակ գայթակեցուցիչ վարմանց վերայ և չարիքի

առաջն առնելու. և նոյն ժողովուրդը ինքն իրան է պատասխանում—'ի հարկէ Հոգեւոր իշխանութեան պարտականութիւնն է, ինչու չէ հսկում, օրինազանցներին չէ պատժում, որ օրինապահները հանդէս գան: Զէ որ քահանայացուին Քահանայական բարձր կոչման մէջ կոչողն ու հաստատողն է Հոգեւոր իշխանաւորը. քահանային՝ նորա կոչման մէջ ցոյց տուածանընդունակութիւնների, զեղծմունքների ու պակասութեանց և պատասխանատուն և դատողը, և պատժողն՝ է նոյն Հոգեւոր իշխանաւորը և այն և այն:

Ուրեմն ժողովուրդը, քահանայի և ժողովրդի մէջ տիրապետող պժգալի յարաբերութեանց պատճառը վերագրում է Հոգեւոր իշխանաւորներին, պնդելով իւր ասածները և շեշտելով՝ թէ Առաջնորդող ձեռք չունենք, կենդրուացնող որժ չունենք և այն:

Մեր ժողովուրդը սովոր է առհասարակ պահանջող լինել հոգեւորականների վերաբերմամբ. նա միշտ նայել է և նայում է Հոգեւորականների վերայ այնպէս՝ ինչպէս ստրկատէրերը իրենց ստրուկների վերայ. այս մասին առարկութիւն եղաւ և բաւական թող համարուի. այժմ տեսնենք թէ որքան իրաւացի ևն ժողովրդի, Հոգեւոր իշխանաւորների վերայ բարձած, մեղադրանքները:

Ժողովրդի մեղադրանաց և մեղադրական հարցմանցը պատասխանում ենք և մեր հարցմունքներով— առ ժամ ընդունենք թէ ձիշտ է ձեր մեղադրանքը. սակայն եթէ այնքան խիստ է ձեր պահանջը քահանաներից և Հոգեւոր իշխանութեանն էք ակնարկում՝ ինչու ուրեմն այս կամ այն պարոնի կամ տիրացուի համար չափչփում էք Առաջնորդարանները, կոնսիս-

տորները, Սինօդը. ինչու ուրեմն կեղծ բազմաստո-  
րագիր համախօսականներով լցնում էք Ստեանները։  
Երեք կան պատճառներ և քաջ յայտնի են ձեզ։ Բայց  
դուք ի՞նչ էք անում—եթէ յարգում է ձեր միջնոր-  
դութիւնը՝ առ երեսս մի թեթև շնորհակալութիւն  
ձեր կողմից Հոգեոր իշխանաւորին, իսկ յետուստ և  
'ի ծածուկ՝ հայնոյանք—որ այնպիսի իշուն ձեռնաւ-  
դրեց Սրբազնը. և պարծենում էլ էք մինչև ան-  
գամ թէ որքան ոյժ ու զօրութիւն ունիք Հոգեոր իշ-  
խանութեան վերայ՝ որ անարժանին արժանացրիք  
Քահանայական կարգին. իսկ եթէ չէ յարգում ձեր  
հզօր միջնորդութիւնը՝ կայծակի շանթեր են, որ հե-  
ռուից ու մօտից, յայտնի և ծածուկ թափում էք Հո-  
գեոր իշխանաւորի վրայ. դրանով չվերջացաւ դեռ ևս.  
Էլի ի՞նչ էք անում. եթէ իշխան էք կամ մեծատուն  
կամ առաջնակարգ դիրք ունեցող մէկը կամ հրապա-  
րակախօս՝ ամեն մէկդ, 'ի դէպ ժամու, պատրաստէք  
ձեր զէնքով վիրաւորանք հասցնելու ձեր միջնորդու-  
թիւնը չյարգող Հոգեոր իշխանաւորին. օրինակ. մի  
Աստուածահաճոյ գործի համար հարկաւոր է դրամա-  
կան, կամ գործակցական, կամ խորհրդակցական, կամ  
միջնորդական նպաստ և օգնութիւն, առ այդ դիմում  
է ձեզ նոյն Հոգեոր իշխանաւորը, և ահա մի մեծ և  
դառն մերժումն. իբրև արդար հատուցումն—որ Հո-  
գեոր իշխանաւորը չձեռնադրեց ձեր ընտրածին ու  
առաջարկածին, դուք մի բոլի՛ անդամ 'ի նկատ առ-  
նում էք Հոգեոր իշխանաւորի կշռադատութիւնը—թէ  
կամ անարժան է ձեր ընտրածը, կամ կարենորու-  
թիւն չկայ, կամ մեծ դժգոհութիւն եւ երկպառա-  
կութիւն, միաչեն անգամ դառնախորհութիւն է

ապառնում ձեր առաջարկածի ձեռնասդրութիւնը.  
և այլ այսպիսի և աւելի ծանրակշիռ պատճառներ։  
Բայց ասել եմ և գարձեալ կառեմ, թէ ժողովուրդը  
մի անգամ առ միշտ սովորել է սպասել—որ Հոգեո-  
րականները իրենց լսեն և իրենց խելքովը մանգան.  
հակառակ դէպքում պատրաստ են ձեռքից եկածը  
չինայել 'ի վնաս Հոգեորներին։ Իսկ ի՞նչ են անում  
դոյնպիսի դէպքում հրապարակախօսները. Աստուած  
ազատէ—էլ ի՞նչ բարուրանք ստութեան, էլ ի՞նչ սե-  
թևեթեալ զրապարտութրւնք չեն լցնում լրագրական  
սիւնեակները—թէ Առաջնորդը երեկ այնքան, այսօր  
այսքան տիրացուներ ձեռնադրեց, թէ նրանք տգէտ  
են, ոչ մի ուսումնարանում չեն ուսել, թէ վիճա-  
կը լցուեցաւ տգէտ քահանաներով այս Առաջնորդի  
օրով. թէ... և այլն և այլն։ Անհեռատես և անշրջանկատ  
թղթակից—յօդուածագրերին էլ քիչն էր պակաս. նո-  
քա ևս անձնական հաշիւներով տոգորուած այս կամ  
այն քահանայի հետ, կամ գուցէ և վշտացած Առաջ-  
նորդից կամ առհասարակ Հոգեորներից՝ նամակներ  
են որ տեղում են կարկտի նման դէպի խմբագրա-  
տունը կեղծանուն ստորագրութեամբ թէ քաղաքից և  
թէ դաւաններից։ Այսպիսի անհեթեթ վարմունք ժո-  
ղովրդի կողմից դէպի Հոգեորները այնքան յաճախ են  
կրկնուում, որ առանց մարդարէ լինելու կարելի է  
գուշակել—թէ ի՞նչ սոսկալի անկումն է սպառնում  
Հոգեոր իշխանութեան իրաւանց՝ եթէ ժողովրդի յա-  
րաբերութիւնը այսօրինակ յարատեէ։ Այսպէս էր եր-  
բեմն և դպրոցների նկատմամբ աշխարհականների  
ունաձութիւնը դէպի Հոգեոր իշխանութեան իրա-  
ւանց սահմանը և թևակոխումը՝ նոյն իրաւանց ոչըն-

չացման, որին և հասան գժբախղաբար. իսկ այժմ ցաւում են ու սգում:

Այս այսպէս լինելուց յետոյ՝ դարձեալ մի հարց ժողովրդին—եթէ գանգատում է նա՝ թէ անարժանաներն են ձեռնադրում՝ ինչու մի անգամ էլ արժանաւորի համար չեկան բարեխօսելու, և եթէ եկան՝ մերժուեցնաւ նոցա միջնորդութիւնը. թող պատասխանէ ժողովութւ.՝ 'Ի դէպ. ուր են այդ արժանաւորները. ինչու չեն զիմում 'ի Հոգեոր կոչումն. ով չէ հաւատացած—որ Հոգեոր իշխանութիւնը գրկաբաց կընդունէ այդպիսի արժանաւորներին. բայց քանի չկան այդպիսիք՝ ի՞նչ է մնում Հոգեոր իշխանաւորներին. փակել եկեղեցիները, չտալ ժողովրդին քահանաներ. լուանալ ձեռքերը և եկեղեցուց և Քահանայից և առհասարակ Աստուածպաշտութիւնից։ Այս ի՞նչ յուետեսութիւն ժողովրդի. այս ի՞նչ սնանկութիւն ուղղախոնութեան։ Եկեղեցին և Հոգեորականութիւնը մեր խնկելի նախնիք այդպէս թեթևագին կշռեցին՝ թէ կեանքի չափով և արեան գնով յոխորտ ալիքներից փրծուցին ու մեզ հասուցին. մեզ՝ որ մանանեխի հատիկի չափ գնահատել չգիտենք նախնեաց մեզ թողած այս սուրբ նուիրապետութիւնք։

Մեզ՝ էլ ոչինչ չէ մնում ասել բայց եթէ ի յայտ ածել այն՝ ինչ որ իւրաքանչիւրիս սիրտն է զգում—թէ ժողովրդի սեպուհ և նուիրական պարտականութիւնն է մեծարել Հոգեոր իշխանութեան իրաւունքը և չձգտել 'ի բռնաբարութիւն այդ իրաւանց. և փոխանակ նեղանալու՝ որ միջնորդութիւնը չըյարդուեցաւ, իւր խնդիրքը մերժուեցաւ՝ ընդհակառակն պարտաւոր է ջատագովել Հոգեոր իշխանաւորի աւանդա-

պահական հոգին և առ պայծառութիւնն եկեղեցւոյ նորա ունեցած նախանձախնդրութիւնը. և ձեռք ձեռքի տուած գործէ իւր Հոգեոր իշխանաւորի հետ. որովհետեւ պատասխանաւութիւնը, ինչպէս և ինքը ժողովուրդն է ասում, լիովին ընկնում է Հոգեոր իշխանութեան վերայ, որոյ տեսչութիւնն է յանձնուած Քահանայական դասի պաշտօնէութիւնը։ Այս բոլոր տեսութիւնից հետևում է այն՝ որ բուռն ոտնձգութիւն և թեակոխումն Հոգեոր իշխանութեան իրաւանց սահմանը ժողովրդի կողմից՝ է փութացնել Հոգեոր իշխանութեան իրաւանց անկումը։

Բայց ով է ջանադիր առ բարելաւութիւնն. ոչ ոք. ամեն ոք իրանով է զբաղուած. ուրեմն երբ չկայ ջանադրութիւն, չկայ աշխատանք՝ չի լինի և արժանաւոր պառուղ կամ արդիւնք։

Շատ երկար կարելի էր խօսել քահանայի և ժողովրդի մէջ բռնակալող վնասակար և կորսատաբեր յարաբերութեանց նկատմամբ. բայց յուսալով որ ընթերցող բանիմաց մասը արդէն իսկ քաջ գիտէ այդ բոլորը՝ ես յիշածներովս բաւականանալով հանդերձ՝ կկամնայի մի վերջին եղբակացութեամբ կնքել Ա. բաժնի վերաբերմամբ արած նկատողութիւններս և յայտնած կարծիքներս—և նախ՝ քահանայի և ժողովրդի աննախանձելի յարաբերութեանց պատճառն է ժողովներդը. որը որքան էլ նկատած լինի Քահանայական գասակարդի մէջ եղած պատահական կամ պարբերական թերութիւնք և պարտազանցութիւնք՝ այսուամենայիւ պիտի մօտաւորէ իրան նոյն քահանային. որովհետեւ մօտաւորելուց օգուտ կայ. իսկ խորշեցնելու վեասը անկասկած է և անխուսափելի.

ինչպէս առիթ ունեցայ ցոյց տալ և ոչ թէ աւելորդ համարել մօտաւորելը զգուշացնելը. պատճառաբանելով թէ «ինչ իմ գործն է նստել, մտածել քահանայից վիճակի բարւոքման մասին». Էհ, մի մկրտութիւն է. կդայ, կմկրտէ ու կերթայ, պսակողին կպսակէ, մեռելին կթաղի. ինչ իմ բանն է գրանց համար մտածելը, գլուխ ցաւացնելը. առանց դրան էլ հազար ու մի մտածեւ. բան ունիմ. թող մտածեն իրենք և իրենց Հոգեոր իշխանաւորները»: Բաւական չէ որ այս կերպ հրաժարւում է ժողովուրդը քահանային մօտաւորուելուց, դեռ մի առանձին բաւականութեամբ էլ բահանայի յետկից հազար ու մի արդարացի և անարդար գանգատներ սրան—նորան պատմել չի զանում և մինչև անգամ լրագրութեան նէլթ է շինում և հրապարակի վերայ դնելով՝ ջանանար է լինում, ոչ միայն իւր ակնարկած քահանային, այլ 'ի դէմս նորա' ամբողջ Քահանայական դասի անունն ու կոչումն արատաւորել: Սա սրբապղծութիւն է ըստ իս: Բայց ահա թէ ինչ պէտքէ անէլ սրտացաւ ժողովուրդը—նա կամ պիտի կանչէր իւր մօտ քահանային կամ ինքը պիտի նեղութիւն կրէր գնալ նորա մօտ և զգուշացնէր նորան. և որ զլսաւորն է՝ մտածէր և գտնէր միջոջներ քահանայից վիճակը բարւոքելու: Բայց նա այս չէ անում, այլ անտարբեր և սառն է վերաբերում դէսփի իւր պարտականութիւնը. որը ոչ միայն իրաւացի չէ, այլ մինչև անգամ գատապարտելի է. որովհետեւ անցան այն երջանիկ ժամանակները՝ երբ կրօնաւորներն էին ժողովրդի առաջնորդները՝ թէ ուսման, թէ կրթութեան ու զարգացման և թէ բարոյական կենցաղավարու-

թեան նկատմամբ: Այժմ արտասուրն աչքերիս և խոր հառաջները սրտերիս՝ հակառակ պատկերներն ենք տեսնում. և հէնց այդ է պատճառը՝ որ ժողովուրդը աւելի ևս պարտաւորէ մօտենալ իւր հոգեոր հայրերին, որովհետեւ նա շատ լաւ գիտէ—որ ինքը առանց Հոգեորականի և Հոգեորականը առանց իրան չեն կարող ապրել. և երկուսի միմեանց արած փոխագարձ օգնութիւնը անհրաժեշտ է երկուսի գոյութեան կանգուն մնալուն:

Երկրորդ՝ քահանայի և ժողովրդի աննախանձելի յարաբերութվանց պատճառն է ինքը քահանան. որ կարծելով՝ թէ իւր լաբիւնթի խորշերը չէ կարող թափանցել ժողովրդի աչքը ու դիմել իւր ծածուկները՝ սկսում է, և եթէ սկսել է, շարունակում է իւր անկարգ, անպատեհ ճանապարհներն ու կեանքը, որը արգէն յայտնի է ժողովրդին: Քահանան ևս ինքը իւր կողմից պիտի մտածէ—թէ Քահանայութիւնը որքան երկրային՝ նոյնքան և երկնային պաշտօն է. ուրեմն և ինքը համապատասխան պիտի կացուցանէ իւր անձը այդ հրեշտակային վսէմ պաշտօնին. հակառակ դէպօւմ ինքը քահանայ չէ. այլ քահանայական հանդերձների մէջ և այդ սուրբ անուան տակ թափառական մի շրջովիկ, որ շրջում է իւր որովայնը պաշտելու համար միայն:

Երրորդ՝ քահանայի և ժողովրդի աննախանձելի յարաբերութեանց պատճառն է և Հոգեւոր իշխանառութը. որը զիջանելով երբեմն պատուական և աղնիւազգայինների միջնորդութեանը, որպէս և այն մեծ կարիքին—որ ժողովրդին քահանայ է հարկաւոր՝ ձեռնադրում է՝ 'ի քահանայ առաջարկեալ ընտրեալին.

թէն ինքը Հոգեոր իշխանաւորն իսկ համոզուած է—  
որ առաջարկեալ ընծայացուն չունի համապատաս-  
խան պատրաստաութիւն առ կոչումն Քահանայու-  
թեան՝ թէ ըստ ուսման, թէ ըստ բարուց և թէ մա-  
նաւանդ ըստ հաւատոյ. և սակայն ձեռնազրում է.  
թէ ինչ կշռադատութիւններով է առաջնորդում՝ այդ  
իրան Հոգեոր իշխանաւորին է յայտնի, քանի որ և  
իւր իրաւանցն է մերապահուած իւր պատասխանա-  
տւութեամբ հանդերձ: Բայց թէ այսպէս, թէ այսպէս՝  
ներկայ հանգամանքում թւում է թէ այլապէս չէր էլ  
կարելի վարուել, որովհետեւ հարկ զօրէնս լուծանեն.  
այսինքն զիւղը քահանայ չունի, ուսումնականը խու-  
սափում է քահանայանալուց, և եթէ զտանւում է  
արժանաւորներից կամեցողը մէկը՝ այն ևս քաղաքում  
քահանայագործելու նսպատակաւ և ոչ բնաւ զիւղում.  
ուրեմն զիւղերը մնան առանց քահանաների. սա ի՞նչ  
անիրազործելի երևակայութիւն է. զիւղացւոց երե-  
խաները չմկրտուին, պսակւողները՝ չպսակուին, մե-  
ռեալները՝ չթաղուին, ապաշխարողները՝ չխոստովա-  
նուին և չհաղորդուին, աները՝ չօրնուին, գերեզ-  
մանները՝ չօրնուին, կալերը, արմտիքը՝ չօրնուին.  
մինչև երբ. մինչև որ կրթեալ և ուսումնական քա-  
հանայացն ստեղծուի...: Այլ է ՚ի հարկէ քաղաքի քա-  
հանաների մասին եղած խորհրդածութիւնը. այլ է  
նա և քահանաների տեղափոխութեան ինդիրը: Արդ՝  
եթէ խստապահանջ ժողովուրդը, որ իրան ամենայ-  
նիւ և յամենայնի անհամեմատ բարձր է համարում  
հոգեորակախններից՝ ինչու մինչև այժմ զիւղական  
քահանաների գրութիւնը բարոքելու միջոցների ձեռք  
չզարկեց. բայց էլ ինչու ենք հեռու գնում, քանի որ

քաղաքի քահանաների վիճակի բարոքման մասին էլ  
ոչինչ չէ արել: Սրանից հետևացնում ենք մի տխուր  
փաստ—որ պահանջելը աւելի հեշտ է՝ քան թէ կա-  
տարելը. և որովհետեւ այսօր պահանջողը ժողովուրդն  
է, իսկ կատարողը՝ Հոգեորականը, ուրեմն ժողովրդի  
հայեցակետով մեղաւոր է Հոգեորականը: Սա սխալ  
տրամախոհութիւն է ժողովրդի կողմից, որովհետեւ  
կարելին միայն պէտքէ պահանջել և պահանջելուց  
առաջ՝ պահանջի իրագործման դժուարութիւնները,  
մինչև իսկ անկարելիութիւնն ՚ի նկատ պիտի առ-  
նուին: Եւ եթէ պահանջներն այս կարգով ու պայ-  
մանով ընթանային՝ այլ ևս պահանջներ չէին լինիւ.  
այլ այդ պահանջները կիրախուեին ՚ի խորհրդակցու-  
թիւն: Ահա, հէնց այդ խորհրդակցութիւնն է, որ տե-  
ղի ունենալով ժողովրդի և հոգեորականի մէջ՝ ար-  
դիւնաւոր հետեւանքի կհամնէինք և էլ տեղիք չէր  
տրուի անբաւականութեանց և ոչ մի կողմից:

Ուրեմն Քահանայի և ժողովրդի աննախանձելի  
յարաբերաւթիւնները բարոքելու համար անհրաժեշտ  
է ժողովրդի մօտաւորութիւնը իւր քահանաներին,  
կամ աւելի ճիշտ առած՝ Քահանայական և Շիա-  
կան Միասնորդ Ժողովները ունենալ, որի մասին  
կիսուենք իւր տեղում:

Բ. Բ ա ժ ի ն.

Քահանայացուի ընտրութեան ձեի և քահանայ դառնալու պահանջների բարեփոխման միջոցներ:

**Պ**ահանայի և ժողովրդի մէջ տիրող աննախանձելի յարաբերութեանց պատճառներից մէկն ևս է քահանայացուի ընտրութեան ձեր և քահանայանալու պահանջները. որոնք նոյնպէս կարօտ են բարեփոխման:

Նախընթացներում տեսանք մենք Քահանայի վրա սէմ կոչումը և նորա բարձր նշանակութիւնը. տեսանք նոյնպէս քահանայի անհամապատասխան լինելը իւր այդ վաէմ կոչման. և իրեւ հետեւութիւն այս ամենի՝ արինք մեր եզրկացութիւնը իրեւ պատճառ ժողովրդի և քահանայի ներկայ աննախանձելի յարաբերութեանց:

Այժմ պէտքէ տեսնուի—թէ որքամ անհամապատասխան են ցարդ մեզ եկած—հասած քահանայացուի ընտրութեան ձեր և քահանայանալու պահանջները, որոնք գրէթէ աղաւաղումն են մեր պաշտելի նախնեաց սահմանադրած ձեին ու պահանջներին. և ուշըն ո՞րպէս պէտքէ բարեփոխել՝ համակերպուելով նախնականին, միաժամանակ աչքից բաց չթողնելով նաև ներկայ պահանջներն ու հանգամանքները. որպէս զի վերջ տրուի ընդ միշտ քահանայի և ժողո-

վրդի մէջ տիրող ներկայ աննախանձելի և ոչ ցանկալի յարաբերութեանց:

Անկասկածելի ճշմարտութիւն է՝ որ երբ ժողովրդին կտրուի իրենց անձնաւորութիւնը ճանաչող, իրենց կոչման և պաշտօնի վսէմութիւնը գնահատող, իրենց մարդկային և Քրիստոնէական պարտիքը հասկացող, ամեն մի դիպուածում և քայլափոխում իրենց խղճի ազդարար ձայնին լսող և հապատակող, իրենց իւրաքանչիւր գործին և խօսքին ծանրակշիռ հաշիւ տւող, և որ գիւտաւորն է՝ այդ երկնային պաշտօնին և երկրաւոր ճշմարիտ գործին ամուր և անդրդուելի հաւատով յարուած արժանաւոր և համապատասխան Պաշտօնակատար և գործող Քահանաներ՝ գէթ այն ժամանակ ժողովուրդը թերևս ինքնին ուղղէ իւր անարդ յարաբերութիւնները գէպի իւր արժանաւոր քահանաները:

Բայց ի՞նչ միջոցներով ձեռք բերուին այդ օրինակելի անհատները, որպէս զի այնուհետև եկեղեցին չկորցնէ իւր պայծառութիւնը յաչս հաւատացեալ աղօթաւորաց. իսկ ժողովուրդը գոհ և բաւական մնալով իւր քահանաներից՝ կատարելապէս համակիր միաւորութեամբ անխզելի յօդաւորուի իւր եկեղեցուն և Հոգևորականութեանը. որ է ցանկալի նպատակը ամին մի բանիմաց, հեռատես և շրջանկատ հայ մարդու. և այն ժամանակ ճշմարիտ Քրիստոնէութիւնն ու Աստուածպաշտութիւնը գարձեալ կընթանան ջերմեռանդ հաւատոյ շաւիղներով. և ոչ նոյն գայթակղութեամբ՝ որպէս ներկայումս:

Ահա ինսպրի էական կողմը:

Քահանայացուի ընտրութեան ձեի և քահանայա-

նալու պահանջների բարեկոխման միջոցների մասին  
հետևեալ դիմումները պիտի լինին,  
Նախ՝ եկեղեցւոյ ստորին պաշտօնէութեան մէջ  
մտնել ցանկացող գպրացուները խնդրագրով դիմում  
են Առաջնորդներին:

Երկրորդ՝ Առաջնորդները յիշեալ գպրացուների  
խնդրագրերը մակագրութեամբ ուղարկում են Կոն-  
ստորուներին կամ Հոգեւոր Կառավարութեանց:

Երրորդ՝ Վերջիններս օրագրական եզրակացու-  
թեան և խնդրագրերի պատճենները իրենց հրամա-  
նագրութեան հետ ուղարկում են Գործակալներին:

Չորրորդ՝ սոքա ժիշականաց ժողովով բնարում  
են դպրացու խնդրատուին շտատնի գպիր իրենց ե-  
կեղեցւոյ և կամ բաց են ասում:

Հինգերորդ՝ ծխականաց ժողովի արգիւնքը գոր-  
ծականները իրենց արձանագրութեամբ և յայտարա-  
րութեամբ մատուցանում են Կոնստորուներին  
կամ Հոգեւոր Կառավարութիւններին:

Վեցերորդ՝ Հոգեւոր Կառավարութիւնք՝ Կոնստ-  
որիխներին. իսկ սոքա՝ Առաջնորդներին:

Եօթներորդ՝ Առաջնորդները առաջագրում են  
Կոնստորուներին, սոքա՝ Հոգեւոր Կառավարու-  
թիւններին և այս վերջին երկու Առենական Հաս-  
տատութիւնք հրամանագրում են Գործակալներին—  
Ճանաչել յիշեալ խնդրատուին շտատնի գպիր նոյն ե-  
կեղեցւոյ, և կամ բացասել:

Ութերորդ՝ Երկու տարի առնուազն եկեղեցում  
սպասաւորելուց յետոյ սարկաւագացու գպիրները հա-  
մախօսական և պարտ ու պատշաճ թղթերը իրենց  
խնդրագրերով ներկայացում են Հոգեւոր Կառավա-

լույթնանց և սոքա Կոնստորուներին:

Իններորդ՝ Կոնստորիխները այդ բոլոր թղթե-  
րը իրենց ենթադրութեամբ ուղարկում են ի Սիաօդ  
Սրբոյ Էջմիածնի:

Տասներորդ՝ Սինօղը իւր որոշումը հրամանա-  
գրում է Առաջնորդներին կամ Կոնստորիխներին  
ի կատարումն:

Մետասաներորդ՝ Կոնստորիխները այդ որոշ-  
ման հիման վերայ կարգադրում և հրամանագրում են  
Գործակալներին կամ Հոգեւոր Կառավարութիւննե-  
րին: Վերջիններս էլ իրենց Գործակալներին:

Երկուտասաներորդ՝ Գործակալները, Սինօղի ու  
Կոնստորիխների և Հոգեւոր Կառավարութեանց ո-  
րոշումը, յայտնում են զրաւոր այն քահանաներին՝  
որոց հետ լծակից պիտի լինի սարկաւագացու խընդ-  
րատու գպիրը:

Երերգտասաներորդ՝ Քահանայք յիշեալ որոշում-  
ները եկեղեցական բէմից ազդարարում և՛ ժողո-  
վը լույսի, որի վերայ պիտի քահանայանայ սարկաւագա-  
ցու գպիրը, նորա համառօտ կննագրութիւնը—ա-  
նունը, հայրանունը, ազգանունը, ուսման և գիտու-  
թեան, վարքի ու բարքի վկայագրերը թէ գպրցա-  
կան հաստատութիւնից տուած, թէ Կոնստորիխից,  
թէ քահանաներից. և հրաւիրում է ժողովրդին խղճի  
մաօք վկայել նորա սրժանաւորութեան և կամ ա-  
նարժանութեան մասին<sup>1)</sup>:

1) Գաղտնի բուշարկութեամբ՝ թէ բացարձակ՝ թէ ինչ  
միջոցով պիտի կատարուի այդ հարցուփորձ՝ զա կախուած է  
ծխական համայնքի որոշումից:

Չորեքտասաներորդ՝ ծխականները և քաղաքի կամ գիւղի համայնքից կողմնակի անձինք ևս դիմում են իրենք կամ պատգամաւորութիւն են ուղարկում՝ ի Կոնսիստորն իրենց նպաստաւոր կամ աննպաստ կարծիքներով, եթէ աննպաստ՝ մերժում են յիշեալ խնդրատուների խնդիրները յետ անաչառ քննութեան. իսկ եթէ նպաստաւոր և յընթացս առնուազն ամսօրեայ միջոցի աննպաստ կարծիք յայտնողներ չերևեցան՝ այն ժամանակ—

Հնդետասաներորդ՝ Քահանայք իրենց ազդարարութիւնները և հետևանքը մանրամասն արձանագրելով՝ յայտարարութեամբ տալիս են Գործակաշներին:

Վեշտասաներորդ՝ գործակալները վերոյիշեալ բոլոր հանդամանքները լիակատար զեկուցագրով յայտարարում են Կոնսիստորնաներին և կամ Հոգենոր Կառավարութիւններին և սոքա Կոնսիստորնաներին:

Եօթնետասաներորդ՝ Կոնսիստորեանները՝ ի Սինօդա. և Սինօդը հրամանագրութեամբ թոյլատրում է ձեռնադրութիւնը:

Քսաններորդ՝ Առաջնորդները զերծ ամենայն պատասխանատութիւնից, անդորր խղճիւ ամբառնում են խնդրատուներին յաստիճան սարկաւագութեան և յետ առ նուազն՝ երկամեայ սպասաւորութեան և՝ ի դէպս կարեորութեան՝ ի կարգ Քահանայութեան: Ի՞նչ կասկած՝ որ այս ձեռով ընտրուած և ձեռնադրուած քահանան սիրով և գրկաբաց կընդունուի իւր ժողովրդից, այստեղ ահա խարտաւիլակների վկայութիւնները կունենան իրենց արժանի կշիռը:

Եւ այպէս՝ դպրանոցի ընթացաւարտ դպրացուն, ինչպէս յիշուեցաւ, եկեղեցական ստորին պաշտօնէու-

թեան մէջ պիտի սպասաւորէ առնուազն երկու տարի. նորա հասակը պիտի լի ոչ պակաս քսան երկու տարեկանից: Երկու տարի նա աշալլջութեամբ, հնագանդութեամբ, պարկեցտ վարուք, համեստ կեսցաղավարութեամբ, ջերմեռանդօրէն պիտի սպասաւորէ Աստուծոյ Տաճարին և պիտի ջանայ սովորել իւր քահանայից բոլոր օրինակատարութեանց, ծիսից և Սրբազն Սրբարողութեանց ձեռքը. և 'ի ժամ կարեորութեան կառաջարկուի վերոյիշեալ հարցմանը, մինչև որ իւր արժանիքը կամբառնան զինքը սարկաւագական ստորիճանին. այդ ստորիճանի մէջ երկու տարի սպասաւորելուց յետոյ, 'ի դէպս կարեորութեան, կձեռնադրուի քահանայ և հովիւ ժողովրդի՝ ի հասկի առնուազն քսանչորս ամաց<sup>1)</sup>:

Շատ սխալ է և հակառակ խղճի, որ եղել են դէպքեր, որ ոմանք չկամելով վարել դեռ ևս եկեղեցական ստորին պաշտօնէութիւն՝ յանկարծ քահանայ դառնալ են ձգտում:

Եւ միթէ կայ այնպիսի մի պաշտօն, ուր ներելի լինին այդ օրինակ քայլաթոփչք: Ինչու քահանայութիւնը պիտի թոյլ տայ այդ բացառութիւնը:

Քահանայամնալ կամեցող դպրացուն, եթէ դպրոցաւարտ չէ և սակայն քահանայի զգալի կարիք կայ այս ինչ կամ այն ինչ գիւղում՝ յանդէպս նա եկեղեցական ստորին պաշտօնէութեան մէջ պիտի ծառայէ առնուազն չորս տարի, որից յետոյ միայն ենթար-

1) Աւելի բարեյարմար էր քահանայացման տարիքը 27-ից մինչև 30-ը հաշուել:

կուելով վերոյիշեալ հարցուփորձից՝ կենթարկուի քըն-  
նութեան։ Կոնսիստորիայն կնշանակէ քննութեան հա-  
մար երեք օր, և իւրաքանչիւր քննութեան համար առ-  
առաւելն երեք ժամ։ այդ քննութեանը, բացի Կոն-  
սիստորիայի անդամներից, ներկայ պիտի լինի, և զբա-  
րանոցի ուսուցիչներից մի քանիսը ըստ առարկայից։

Քննութիւնը լինելու և հետեւեալ առարկաներից—

*Ա.* Առեւտարանագիտութիւնն.

կենսագրութիւն Զորս Աւետարանիչների։ Ժա-  
մանակագրութիւն և հանգամանը Աւետարանագրու-  
թեան։ Համակերպութիւնն և Տարածայնութիւն Աւե-  
տարանչաց։ Աւետարանի Ուսուցողական, Առակաւոր,  
Բժշկական, Հրաշագործական և Կենսագրական բա-  
ժինների հմտութիւն։

*Բ.* Ուսումնական Սույր Գլոց.

Հին և նոր ուխտի պատմութիւն—Հինը՝ Զորս  
Ջրջանաբաժնով—Նահապետական, Դատաւորական,  
Թագաւորական, և Մարդարէական։ Կենսագրական  
Ծանօթութիւն Գլխաւոր Մարդարէների։ Նորը՝ Երեք  
Ջրջանաբաժնով—Գործք Առաքելոց, թուղթք Պողոսի,  
թուղթ Կաթուղիկեայք միւս Առաքելոց։ Կենսագրա-  
կան Ծանօթութիւն երկագիր Առաքելների։

*Գ.* Քրիստոնէական Վարդասպետութիւնն.

Աստուածածանօթութիւն՝ ի հասարակի։ Կրօն—

Այլադաւան և Քրիստոնէական։ Բաժանմունք և Ճիւ-  
ղեր Կրօնի։ Խորհուրդք Եկեղեցւոյ։ Հաւատ և մա-  
սունք նորա։

*Դ.* Եկեղեցական Պատմութիւնն.

Հարեւանցի հմտութիւն Առաքելական Յաջորդու-  
թեանց։ Համառօտ տեսութիւն ընդհանուր Եկեղեցա-  
կան Պատմութեան և Գլխաւոր Գործիչների։ Պատմու-  
թիւն Եկեղեցւոյս Հայաստանեաց։ Քրիստոնէական  
Կրօն ՚ի Հայո, Տիեզերական և Ազգային Եկեղեցական  
Ժողովներ։ Լիակատար Ծանօթութիւն Ազգային—Եկե-  
ղեցական գործիչների։

*Ե.* Պատմութիւնն եւ Աշխանագրութիւնն.

Համառօտ տեսութիւն ընդհանուր Պատմութեան  
և Աշխարհագրութեան։ Հարեւանցի Ծանօթութիւն զըլ-  
խաւոր Պատմագիրների և Աշխարհագիրների։ Պատ-  
մութիւն Հայոց և Աշխարհագրութիւն Հայաստանի.  
Լիակատար Ծանօթութիւն Ազգային Պատմագիրների  
և Աշխարհագիրների։

*Զ.* Պատմութիւնն Հայ Դպրութեան.

Անգիր Մատենագրութիւն—Գողթան երգեր, Գրա-  
ւոր Մատենագրութիւն, Հարեւանցի Ծանօթութիւն  
Հին Մատենագրաց Գործոց և Երկոց։ Լիակատար  
Ծանօթութիւն Արդի Մատենագրութեան։

է. Հայոց յեզոն.

Սահուն ընթերցանութիւն գրաբառի և աշխարհաբառի փոխադարձ թարգմանութեամբ, քերականական և տրամաբանական լուծմամբ. թելադրութիւն անսխալ. զարադրութիւն գրաբառ. չիմնական ծանօթութիւն գրաբառի բոլոր հոլովմանց և խոնարհմանց:

Ը. Աստուածպաշտոնթիւն.

Տաճար և նորա ներքին և արտաքին կազմակերպութիւն և պարագայք, Աստուածպաշտական ծէսեր և սրբազն արարողութիւնք. Եկեղեցւոյ Սրբարար խորհրդոց արարողական կամ ծիսական պաշտամունք. Եկեղեցական սրբազն մատեանք. գործածութիւն նոցա. ծանօթութիւն ներքին բովանդակութեանց նոցա և հեղինակաց, ծանօթութիւն Աստուածպաշտական կարգերի սահմանողների և սրբազն Մատենից, աղօթից, շարակնոց և այլն. Ս. Պատարագ. փորձնական հմտութիւն արարողական մասին. դիտութիւն խորհրդոյ Ս. Պատարագի:

Թ. Տօմարագիտոնթիւն.

Բնինանուը տեղեկութիւն Յուլեան, Գրիգորեան և Հայոց տօմարների մասին.

Ժ. Թոհարասմոնթիւն.

Թուեր և թուարկութիւն. Անուանական թուեր.

Զորս գործողութիւն՝ ամբողջ թուերի և հասարակու տասնորդական կոտորակների:

Երբ ոչ գպրոցաւարտ գիւղական քահանայացուն վերոյիշեալ տուարկաներից յաջող քննութիւն բռնէ՝ այն ժամանակ ընդունում է սարկաւագական աստիճանը: Երկու տարի սարկաւագական պաշտօնը վարելուց յետոյ, 'ի գեպս կարեորութեան, ձեռնադրում է Քահանայ:

Ո՞վ չի երաշխաւորի այնուհետեւ, որ այս ընթացիւք ժողովուրդը կունենայ արժանաւոր քահանաներ. որոնք, ըստ ամենայնի համապատասխան գոլով ժողովրդի պահանջներին, մեծ համակրութիւն կգտնեն ժողովրդից և կարժանանան նոցա գրկաբաց ընդունելութեան և օրինական յարգտնաց. և երկուսի փոխադարձ յարաբերութիւնները կուղուին 'ի լաւն. նոքանաշութեամբ, ձեռք ձեռքի տուած և առ միմեանս միրով՝ կընթանան 'ի պատիւ Հոգեօրականութեան և 'ի շինութիւն ժողովրդեան. հետևապէս ուրեմն՝ 'ի պայծառութիւն Եկեղեցւոյս Հայաստանեայց:

Այս այսպէս լինելուց յետոյ՝ կարելի է եզրակացնել—որ քահանայանալ կարող է՝

Նախ՝ նա, որ իւր մանկութիւնը անցրել է Հոգեորդ զպրոցներում կամ առհասարակ կրթական տաճարներում. ունենալով զպրոցի ընթացաւարտ վկայական և արժանաւոր ու գովանի վարուց վկայաթղթեր:

Երկրորդ՝ նա, որ թէև գպրոցաւարտ լինելու բաղդը չէ ունեցել՝ սակայն յիշեալ առարկաներից յաջող քննութիւն բռնելով՝ ունի վկայական. և ուրեմն իրաւունք՝ գիւղական քահանայ լինելու:

Երբորդ՝ նա, որ տեղական քահանաների և հասարակութեան կողմից բարի վկայութիւն կունենայ գրաւորապէս.

Չորրորդ՝ նա, որ նախընթացում յիշուած բոլոր հարցուփորձական ցուցմունքները նպաստաւոր են եղած նորա քահանայանալուն, և

Հինգերորդ՝ նա, որ առ կոչումն քահանայական՝ ունի կատարեալ համար և ոչ թէ քահանայութիւնը՝ դաւանում է ապրուստի միջոց:

Յիշեալ հինգ յօդուած պահանջներին համապատասխան քահանայացուին հոգեոր իշխանութիւնը իրաւամբ և ազատ խղճով ձեռնադրում է քահանայ Աստուծոյ և հովիւ ժողովրդի:

Այս կերպ քահանայացող հոգեոր հայրերը առիթ տուած կլինին քահանայի և ժողովրդի աննախանձելի և լարուած յարաբերութեանց ՚ի ցանկալին բարեփոխման:

Սորան ևս իբրև սաաարող միջոց՝ պիտի հանդիսանայ երկրորդ էական մասը—այն է՝ քահանայական արդեանց վերացումը և կանոնաւոր ոռոճի հաստատութիւնը, որը կազմում է Գ. բաժնի նիւթը:

Այս է ահա գրբուկիս Ա. Շըջանում Արժանառոր գործին՝ Արժանառոր գործող կամ ըստ գործոյն՝ գործավար ասածու. որովհետեւ՝ որքան վսէմ և մեծ գործ է Քահանայութիւնը՝ նոյնպէս ևս վսէմ և մեծ պիտի լինի գործավարը, որ է քահանան. որպէս զի երկումն ևս—Քահանայութիւն և Քահանայ համերաշխ լծակցութեամբ ընթանան և գործատէրը, որ է Աստուծած, ուրախանայ ՚ի փառա:

### Գ. Բ ա Ժ ի ն.

Քահանայական արդեանց վերացումը և կանոնաւոր ոռոճի հաստատութիւնը:

**Փ**ահանայի և ժողովրդի աննախանձելի և լարուած յարաբերութեանց բարոքող միջոցներից մինչ ես՝ է Քահանայական արդեանց վերացումը ևս կանոնառոր ոռոճի հաստատութիւնը Քահանայական ևս ծխական միահարուդ ժողովներով:

Մամուլը այդ մասին շատ է գրել, շատ է քարոզել, սակայն ափսոս, որ միշտ նորա քարոզածը մնացել է «Զայն բարբառոյ յանապատի». թէպէտ, դարձեալ կրկնում եմ նախընթացներում ասածներս, եղած են թոյլ, միակողմանի և որ զիսաւորն է՝ ոչ պարբերաբար:

Քահանայական ոռոճի կարևորութեան մասին ընդարձակուել այստեղ կարիք չկայ, քանի որ արդէն խօսուեցաւ: Այս բաժնի մէջ ես պիտի դնեմ ժողովրդի հայեցողութեան առաջ քահանայական կանոնաւոր ոռոճի մի ցուցակ կամ կանոնադրութիւն, որը, իբրև մի փորձ, կարող է կամ իրագործուել կամ բա-

ըեփոխուել, համակերպուելով ոռնկի խնդրին վերաբերեալ բոլոր հանգամանքներին:

Քահանաների վիճակի ապահովութիւնը կանոնաւոր ոռնկով՝ անհերքելի է, ինչպէս տեսանք. մնում է հաշտուել դժուարութեանց հետ, որոնք ամենայն քայլափոխում խոչընդոտ պիտի հանդիսանան կանոնաւոր ոռնկի հաստատութեան մտքի և գործադրութեանը. որովհետև առաջին փորձը պիտի լինի: Իսկ աշխատել որևիցէ բացատրութեամբ հերքել խնդրի կարեսութիւնը և խանգարել այդ գեղեցիկ մտքի իւրագործումը՝ կնշանակէ ամենելին չկամենալ—կըրթուած և բարեբարոյ քահանաներ ունենալ, եկեղեցին իւր պայծառութեան մէջ պահել և ժողովրդի անվերջ տրտունջներին վերջ դնել.

Իսկ այն տարօրինակ միտքը—թէ քահանաները որոշեալ չափով կանոնաւոր ոռնկի ունենալով՝ կթուլանան իրենց պաշտօնավարութեան մէջ՝ նախընթացներում ըստ կարելոյն հերքուեցաւ. որպէս և այն միտքը—թէ քահանաները պիտի լինին աղքատ և բաւականան ժողովրդի կամաւոր տուրքով, ինչպէս այդ լինում էր Առաքելական ժամանակներում: Այդ օրինակ մտքերի հերքման հետ միասին՝ի նկատի պիտի առնուի և այն հանգամանքը—նախ՝ որ ներկայումս ժողովուրդը սովոր է և սպասում է տեսնել իւր քահանային պատուաւոր և վայելուշ կենցաղավարութեամբ. և ըստ մասին, կարծես թէ, պահանջում էլ է, որ այդպէս լինի. և դա շատ բնական է, չէ՞ որ աչքի աշխարհ է այժմ և ոչ սրաի. Առաքելական ժամանակները սրաի աշխարհ էր. դրա համար էլ այլ աշխարհայեցողութիւն էր. երկրորդ՝ ժողո-

վուրդը դժուարակենցաղ ներկայն պատճառ բերելով՝ զրկում է քահանային իւր տուրքերի մէջ. երրորդ՝ իսկ քահանային հարկաւոր է ընտանեաց անհրաժեշտ կարիքը լցուցանել. մանաւանդ որդւոց կրթութեան համար և՛ հոգալ և ծախսել. առանց որոյ քայլ փոխել ներկայումս անհնար է. բայց այդպէս էր Առաքելական ժամանակներումը. ամեն քայլափոխ իւր վարկանին է պահանջում. որպէս ճանապարհորդից՝ անցագիր է պահաջում իւրաքանչիւր իջևանում: Ո՞ւժ չէ յայտնի, որ կենսական անհրաժեշտ ծախքերի վերայ այժմ աւելացած են որդւոց ուսման և կրթութեան ծանրագին ծախքերը. ծախքեր՝ որոնք կենսականից աւելի անհրաժեշտութեան մէջ են դրուած և իսպառ անխուսափելի են. իսկ այդ անհրաժեշտ ծախքերը կարո՞ղ են լցուցանել քահանայի ներկայ արդիւնքներն ու եկամուտները<sup>1)</sup>. և այն՝ անորոշ չափու քանակի դատապարտուած: Եւ ահա—այսպիսի հանգամանքներում ու անհերող պարագաների մէջ ապրող քահանային է առաջարկում ձգել աչքերը Առաքելական ժամանակներին և բաւականանալ ժողովրդի կամաւոր տուրքով:

Ո՞րքան անխորհուրդ միտք և անհեթեթ առաջարկութիւն. թէկ ըստ ոմանց՝ դադափարական. որովհետև Առաքելական է:

1) 'Ի բաց առեալ միծատուն բազմածուխ քահանաներից. որոնք կարող են ընդիմախօսել իմ ամբոջ առաջարկին, միշարք պատճառաբանութիւններ առաջ բերելով. բայց ո՞րքան առհաւատչեայ. վաղը զրկիր նորանց իրենց մեծատուն բազմածուխ վիճակից՝ և լեզուն կփոխէն...:

Շատ պարզ է և զանազան ապացոյցների ընաւանկարօտ այն ճշմարտութիւնը՝ թէ քաղցած ստամբքսը անընդունակ է աշխատանքի և գործելու անգամ՝ ուր թէ արժանաւորապէս գործելու:

Որքան որ հրէշաւոր երեսիթ էր համարուած քահանաների կանոնաւոր ոռոճկի սահմանադրութիւնը մինչև այսօր՝ նոյնքան և աւելի ևս հիմնական, կանոնական և անհրաժեշտ պահանջ է դաւանւում այսօր նոյնպիսի ոռոճկի սահմանադրութիւնը, որը՝ ի նկատ առնելով և ես, մինը նոյն քահանաներից, համարձակուեցայ կազմել քահանայական ոռոճկի ցուցակը կամ կանոնադրութիւնը. կամելով, որքան կարելի է, դիւրացնել քահանայական ոռոճկի երևակայական դժուարութիւնները:

Ահա իմ առաջարկած՝ քահանայական ոռոճկի ցուցակը կամ կանոնադրութիւնը, որը թէև ըստ երեսիթին գուցէ անիրազործելու կամ գէթ դժուար երեկի, սակայն ժողովրդի պատրաստականութիւնը և Ազգիս Հայրախնամ Վեհափառ Կաթուղիկոսի բարձր բարեհածութիւնը կղիւրացնեն երևակայական դժուարութիւնները:

Այս ցուցակը կազմելիս՝ նախապէս խորհրդակցել եմ մի քանի բանիմացների հետ. որոց կարծիքով՝ յարմարագոյն է համարուած ոռոճկների այս ձեւ հաւաքումը և մասնատրութիւնը, մանաւանդ, որ առիթէ տալիս սա բահանայական—ծխական միասորոշ ժողովների ասմանադրութեան:

Ողերուած բարեմիտ բանիմացների խրախոյսներց՝ ձեռն արկի սորտ կազմութեանը, բայց և այնպէս ցանկալի էր, որ աւելի ձեռնոու և յարմարագոյն

ցուցակներ ևս կազմուէին և առաջարկուէին Ազգիս Վեհափառ Հայրապետի բարեհած ընտրութեանը և անօրէնութեանը:

Աւելի ևս բաղձալի էր, որ Ազգիս Վեհափառ Հայրապետը օր առաջ բարեհածէր հաստատել քահանաների կանոնաւոր ոռոճկի խնդիրը և յաւիտենական քաղցը յիշատակ թողնէր Ազգիս համօրէն Հոգեորականաց յիշողութեան մէջ. որովհետև իբրև վերջին կնիք մեր բոլոր առաջների՝ դարձեալ կրկնում ենք—Ճուկը բահանաներին կանոնականոր ոռարկ՝ եւ կունենար արժանառոր եւ ուսեւալ ու կիրած բահանաներ. եւ կրաքնիուորի բահանայի եւ ժողովրդի անհանանձնի եւ սնհամակիր յարարելութիւնը:

Այս հակիրճը թող ընդպարձակեն իմաստասէր բանիմացները, առ երեսս և հարեւանցի քննողների հետ գործ չունենք:

Սորանով իսկ վերջացնում եմ «Մի պոոյտ Հայ Մամոնի, Հոգեւորականների ու ժողովրդի շուրջը» հարեւանցի ակնարկիս Ա. Շըջանը. Ընթերցողք բնաւյանդզութիւն չհամարեն իմ այս հարեւանցի ակնարկներս լրագրական թղթակից—յօդուածազըների և յօդուածների վերաբերմանը. ոչ իսկ խմբագիրք յուղուին ու նեղանան. եթէ ես վստահանում եմ մի քանի ակնարկ ձգել մեր լրագրական հանդիսում մերթընդ մերթ երեցած ինչ ինչ զանցառութեանց վերայ՝ այդ անում եմ նախ ստիպեալ՝ ի կոչմանէս, որպէս զի Աւետարանական ճշմարտութիւնը խաւարով ծածկուած չմնայ. և երկրորդ՝ դորանով չկամմի բնաւ, ոչ իսկ կարող եմ ուրանալ լրագրութեան արած օգ-

տակար ծառայութիւնը, ընհակառակն գորանով ես ցոյց եմ տալի, որ թատրոն, լրագրութիւն, ուսումնարան, եկեղեցի և ժողովուրդ պիտի ընթանան աջակցաբար, պիտի գործեն եղբայրաբար՝ միութեան համերաշխ ուժով և մանաւանդ նպաստել Հաւատի գործին՝ որպէս զի օգուտը աներկբայ լինի, որը տակաւին տարակուսանաց երկունքի մէջ գոլով՝ աւելի վնասով է տուժւում և որից ամենայն սրբութեան՝ տապալման ու քայքայման չարագուշակ մնչիւնն է լուսում:

Պ. Բ ա ժ ի ն.

Կանոնադրութիւն Քահանայական ոռնկաց.

I. Կազմութիւն Առենի կամ ծխական Հոգարաբանութեան.

Յօդ. Ա.

Ս բ ա տ ա ռ Կ ո ն դ ա կ ա ւ Վ ե հ ա փ ա ռ Կ ա թ ո ւ ղ ի կ ո ս ի  
Ա զ գ ի ս՝ կ ա զ ս ի Ա տ ե ա ն Ծ խ ա կ ա ն Հ ո դ ա բ ա ր ձ ո ւ թ ե ա ն ։

բաղկացեալ՝ ի քսան և հինգ Ա տ ե ն ա կ ա լ ա ց, յ Ա տ ե ն ա պ ե տ է, ՚ի քարտուղարէ և ՚ի գանձապահէ:

Յօդ. Բ.

Ա տ ե ն ա պ ե տ Ա տ ե ն ի ն է Ս ր բ ա զ ա ն Ա ռ ա ջ ն ո ր դ ն վ ի ճ ա կ ի ն. վ ե ց ն յ Ա տ ե ն ա կ ա լ ա ց՝ ե ն ա ր ժ ա ն ա ւ ո ր յ ա տ կ ո ւ թ ե ա մ բ վ ը կ ա յ ե ա լ Ք ա հ ա ն ա յ ք, ի ս կ տ ա ս ն կ ո ւ թ ն յ Ա տ ե ն ա կ ա լ ա ց՝ ե ն ա ր ժ ա ն ա յ ա ր դ ա ն ձ ի ն ք յ ա շ խ ա ր հ ա կ ա ն ա ց.

II. Հ ա տ ր ո հ թ ի ւ ն Ա ռ ե ն ա կ ա լ ա ց.

Յօդ. Գ.

Ա շ խ ա ր հ ա կ ա ն Ա տ ե ն ա կ ա լ ք ը ն տ ր ի ն գ ա ղ ա ն ի ք ո ւ է ա ր կ ո ւ թ ե ա մ բ ՚ի ծ խ ա կ ա ն ա ց ե կ ե ղ ե ց ե ա ց Հ ա յ ո ց Տ փ ի ս ա յ 1):

1) Ե ա ն օ թ ո ւ թ ի ւ ն — Ո ր պ է ս կ ա ն ո ն ա դ ր ո ւ թ ի ւ ն ա յ ս, ն ո յ ն պ է ս և տ ր ո հ ո ւ մ ն ծ խ ո ց ը ս տ դ ա ս ա կ ա ր գ ի և ո ո ն կ ա ց յ ա լ մ ա ր ե ց ո ւ ց ե ա լ է թ ւ ո ց ե կ ե ղ ե ց ե ա ց, ք ա հ ա ն ա յ ի ց և Հ ա յ ա զ ա ն ա կ ո ւ թ ե ա ն Տ փ ի ս ի ք ա ղ ա ք ի ։ Ը ս տ ս մ ի ն, բ ա յ ց ի ն չ ի ն չ փ ո փ ո խ ո ւ թ ե ա մ բ ք, կ ա ր ե ն դ ե կ ա վ ա ր ի լ և ա յ լ Հ ա յ ա ր ն ա կ ք ա բ ք :

Յօդ. Դ.

Ծ խ ա կ ա ն ք յ ի շ ե ա լ ե կ ե ղ ե ց ե ա ց ը ն տ ր ե ն ՚ի մ ի ջ ո յ

իւրեանց զերկուս անձինո. զմինն՝ յԱնդամութիւն և  
զմիւսն՝ իբրև զԱնձնափոխանորդ նորին:

Յօդ. Ե.

Ընտրեալ ծխական Հոգաբարձուք, ընդ նախա-  
գահութեամբ թէմակալ Առաջնորդին, ընտրեն զվեց  
քահանայս յԱնդամութիւն և զերեքն՝ իբրև զանձնա-  
փոխանորդս նոցին:

Յօդ. Զ.

Ընտրութիւն ծխական Հոգաբարձուաց հաստատի  
կոնդակաւ Վեհափառ Կաթուղիկոսի վեցամեայ ժա-  
մանակաւ:

III. Նպատակ ծխական Հոգաբարձութեան.

Յօդ. Է.

Նպատակ ծխական Հոգաբարձութեանն է —

- 1) Հաւասար ծխաբաժնութիւն.
- 2) Սահմանադրութիւն կանոնաւոր ոռնկաց քա-  
հանայից.
- 3) Բարձումն քահանայական ամենատեսակ ար-  
դեանց ի Մկրտութենէ, ի Պատկաղութենէ, ի Թաղ-  
մանէ, ի Տնօրհնեաց, ի գանձանակացըմանէ և յայ-  
լոց<sup>1)</sup>.

1) Եանօթութիւն — Ո՛չ ենթարկին յօդուածոյս եր-  
բորդ պարբերութեան նախ՝ ժամուց

կամ յիշելիք անուանեալ բարեպաշ-  
տական տուրքն կամաւոր, զի է դա զըէ-  
թէ մասն պատարագին որ ՚ի ժամ Ըշ-  
խարհգալոցին. և երկրորդ՝ տուրք գե-  
ղեգան օքնէն էից. զի է դա սովո-  
րութիւն նուիրական՝ իբրև յիշումն հոգ-  
ւոյ ննջեցելոյն:

4) Միաւորութիւն Հոգաբարական և Աշխարհական  
դասուց ՚ի խորհրդակցութիւն բարեփոխութեանց:

VI. Հառասար ծխաբաժնութեան.

Յօդ. Ը.

Առաջին գործ Ատենի կայանայ ՚ի հաւասար բա-  
ժանումն ծխոց, ըստ դասակարգի, ՚ի մէջ քահա-  
նայից<sup>1)</sup>

1) Եանօթութիւն — Ըստ հարևանցի հաշուակալու-  
թեան երկի — զի թիւ չայ ազգաբնակու-  
թեան ծփխիսի ըստ գերդաստանց՝ հա-  
սանի եօթն հազար ինն հարիւր յիսուն  
տանց, իսկ թիւ չայ քահանայից քաղա-  
քիս՝ առ առաւելն՝ յիսուն և երից. հա-  
ւասար բաժանմամբ ծխոց՝ առ իւրա-  
քանչիւր քահանայ յատկանայ մի հար-  
իւր յիսուն առն, երկու հարիւր մի  
ոռւրի և 10 կոպէկ ոռնկաւ յամիսն,  
որպէս երեխ՝ ՚ի հետեւալ ցուցակին —

Յօդ. Թ.

Տղոհումն ծիսց ի դասա- կալում:	Թիւ ծխոց ըստ դասակ. առ մի քա- հանայ:	Ամսակ. և տա- թեկան առուրք իւսաքանչ. ծր- իսաքանչ. ժակ. առ մի քա- հանայ:	Գումար ամսակ. առուրք ծիսակա- նաց կամ սական սոճիկ քահանայ:	Գումար ամսակ. կան արոց կամ առանց կամ տարեկ. սոճիկ քահանայ:
Առաջնա- կարգ չարուստ.	53	1	7 / 84	7
Երկրորդա- կարգ չարուստ.	318	6	5 / 60	6×5 =
Մեջմակ. Ապահով.	3710	70	1 ռ. 63 կ. 19 ռ. 56 կ.	70×1 ռ. 63 կ. = 114 ռ. 10 կ.
Իսկական Միջմակ.	2650	50	1 / 12	50
Իսկական 2քառորդ.	1219	23	Զ Ռ Ւ	Ա Բ *
Գումար.	7950	150	»	201 ռ. 10 կ.
				2413 ռ. 20 կ.
				127,899 ռ. 60 կ.

Եւ արդ՝ որպէս երկի 'ի ցուցակէ 7950  
տակն չայ ազգաբնակութիւն Տփխիս քա-  
ղաքի 53 ծիսական քահանայից իւրոց,  
առ իւրաքանչիւրն վճարէ 201 ոռոքի 10  
կոպէկ ոռոճիկ յամիսն, իսկ 2413 ոռոքի  
20 կ. 'ի տարին. որով, և շմնայ տեղի  
կասկածանաց, զի վիճակ քահանայից  
ապահովեալ պատկառելի գումարաւ ոռոճ-  
կաց՝ զտեղի ներկայ քահանայիցս փոխա-  
րինեսցեն ևս քան զմեղ արժանաւորա-  
գոյնքն. որք և հետզհետէ բարձրացուցեն  
զանկեալ վիճակ քահանայական կոչման:  
Յիշեալ Ցուցակն ընդհանրապէս, և 'ի մաս-  
նաւորի վասն վարձատըութեան ծիսա-  
կանացն ըստ դասակարգի, եղեալ է  
աստ միայն իրրև զշափ փորձնական և  
ոչ իրրև զանշեղ կանոն. և կարէ են-  
թարկիլ յարմարագոյն փոփոխութեան:

V. Գործոռնակութիւնն Առեւմ

Յօդ. Ժ.

Առեւմնն 'ի ժամանակին պարտի պահանջել 'ի քա-  
հանայից գհաւաքեալ տուրս ծիսականաց, մուծանել  
գհաշիւ գումարացն ի սահմանեալ մատեանս, տալ  
քահանայից զանդորրատումսն ի հասուցանել ծիսակա-  
նաց, բաժանել քահանայից զոռճիկս նոցա ի ժամա-  
նակին և զմնացորդ գումարն գնել 'ի դրամատունս  
ի շահեցողութիւն յընթացիկ հաշիւ:

Յօդ. ԺԱ.

Ատեանն պարտի ազդարարել զանցառու տաճն,  
որ դանդաղի ի վճարման կիսամեայ տրոցն ի ոռձիկ  
քահանայի. և եթէ ամիսք երկուք անցցեն ի վերայ և  
զանցառու տունն ոչ յօժարեացի ի վճարումն տրոցն  
առանց յարգելի ապահառանաց՝ յայնդէպս Ատեանն  
ազդեսցէ տաճն զանցառուի՝ ծխական քահանայիւն և  
երիւք ատենակալօք. և 'ի դէպս իսպառ հրաժարմանն  
'ի տւշութենէ ծխական տրոցն՝ Ատենին մնայ տնօ-  
րինել զարժանն. զի մի՛ գժտութիւն ինչ դիպիցի  
'ի մէջ ծխականացն նոյնպիսեաց և Ատենին:

Յօդ. ԺԲ.

Եթէ մի ոք 'ի քահանայից ծուլասցի ՚ի քահա-  
նայական պաշտամունսն և կամ յանձնարասցէ զար-  
բազնագործութիւնն այլում քահանայի առանց յար-  
գելի պատճառանաց՝ յայն դէպս Ատեանն ի բաց  
բարձցէ յամսական ոռձկաց նորին զվեց կոպէկս  
առ մի արձաթ. և տնօրինեսցէ յօփուտ գանձարանին  
Որբոց և Այրեաց. և զպղերդ քահանայն խստագոյնս  
յանդիմանեսցէ ի ներկայութեան համայն կարգակ-  
ցացն ի զգաստութիւն:

Յօդ. ԺԳ.

Եթէ հիւանդանայցէ մի ոք 'ի քահանայից և կամ  
բացակայեսցէ ՚ի պաշտօնատեղողոջէն կարգադրու-  
թեամբ Հոգեոր իշխանութեան՝ Ատեանն բարձցէ յամ-

սական ոռձկաց բացակայ կամ հիւանդ քահանային,  
զվեց կոպէկս առ մի արձաթ ՚ի վարձ աշխատա-  
նաց 'ի տեղի նորա կարգեցեալ ժամանակաւոր քա-  
հանային:

Յօդ. ԺԴ.

Զքանակ և զձկ տւչութեան ոռձկաց սարկաւա-  
գաց, զպրաց և ժամկոչաց սահմանեսցէ և կարգաւո-  
րեսցէ Ատեանն ըստ իւրում բարեհայեցողութեան  
բարձրագոյն տնօրէնութեամբ Վեհափառ Հայրապետի  
Ազգիս <sup>1)</sup>:

1) Ծանօթութիւն—եթէ յաւելեալ տոկոսիք շահեց-  
ման գումարացն ոռձկաց քահանայից,  
որ 'ի զբամատունսն, բաւեսցին 'ի բաշ-  
խումն վերոյիշեալ սպաշտօնէից իբրև  
'ի ոռձիկ՝ յայն դէպս մարթէ 'ի յաւե-  
լեալ տոկոսեացն տալ. իսկ եթէ ոչ՝  
յայնժամ յեկեղեցեաց քաղաքիս, ըստ  
սահմանադրութեան Ատենի. բայց զոռ-  
նիկ սարկաւագացն մարթ էր կազմել  
'ի տոկոսեացն:

Յօդ. ԺԵ.

Ի դէպս բարեփոխութեանց, վերաբերելոց կրօ-  
նական արտաքին ծխակատարութեանց, զորս կամիցի  
առնել Ատեանն և ոչ յիշատակին 'ի կանոնադրու-  
թեանս, յայնժամ պարտի հայցել առ այն զբարեհամ  
տնօրէնութիւն Վեհափառ Հայրապետին Ազգիս <sup>2)</sup>:

2) Ծանօթութիւն—Յուղարկաւորութիւնիք ննջեցե-  
լոցն բացաւ զլիով 'ի ցուրտ, 'ի տօթ-

և յանձրեային եղանակի. 2) Սովորութիւն քառասնից պատարագաց յիօթ-նեական Յինանց. 3) Վարձաւոր պատարագը զրէթէ ամենօրեայք և պարբերականը. 4) Տնօրհնէքը երկօրեայք կամ եռօրեայք. որպէս պահանջին Ծխականք և ոչ Ութօրեայք՝ 'ի ծննդեան Տեառն. 5) Մկրտութիւնն՝ յեկեղեցւոջն և ոչ 'ի տան. 'ի բաց առեալ զծանը հանգամանը—զտկարութիւն մանկան տսեմ, և այլ սոցին նմանք, որոց փոփոխութիւնն 'ի լաւն և 'ի պատշաճաւորն, չունի վնասել ողջամիտ վարդապետութեան եկեղեցւոյս Հայաստանեայց:

#### VI. Ժողովական գումարմունք.

##### Յօդ. ԺԶ.

Նիստք Ատենի կայասցին յԵրկամսեայ, յԱմսական և յԵրկնուագ գումարմունն այսպէս—Երկամսեայ նիստք Ատենի կայասցին 'ի հետեւեալ ամիսն՝ 'ի Յունի վարի, 'ի Մարտի, 'ի Մայիսի, 'ի Սեպտեմբերի և 'ի Նոյեմբերի. Ամսական նիստք՝ յամիսն մի նուագ. Երկնուագ նիստք յամսեանն Յունվարի և 'ի Մարտէ յԱպրիլն յետ երկուց Տնօրհնեաց 'ի 20-ն ամսոյն:

##### Յօդ. ԺԷ.

Երկամսեայ նիստք գումարին 'ի խորհրդակցութիւն ինչ ինչ բարեկարգութեանց և բարեփոխու-

թեանց, վերաբերելոց Հոգևորականաց և Կրօնական արտաքին սովորութեանց<sup>1)</sup>.

1) Եանօթութիւն—Յայսոսիկ նիստան գումարմանց Ատենակալք կարեն հրաւիրել 'ի խորհրդակցութիւն և զկողմնակի բանիբուն անձինս:

##### Յօդ. ԺԲ.

Ամսական նիստք գումարին 'ի 20-ն ամսոյն. ուր և հրաւիրին համօրէն քահանայք յստացումն ամսական ոռճկացն<sup>2)</sup>.

2) Եանօթութիւն—Բացակայ քահանայք գրաւոր յայտարարութեամբ զստացումն ոռճկացն կարեն յանձնաբարել որոց և կամին:

##### Յօդ. ԺԹ.

Յայսոսիկ նիստան գումարմանց քննեսցին զանցառութիւնք քահանայից և որոշեսցին պատիժք կամ տուգանք ըստ տրամադրութեան կանոնադրութեանս:

##### Յօդ. Ի.

Երկնուագ նիստք գումարին յետ երկուց եօթ-նեկաց Ծննդեան և Զատկական տնօրհնեաց. ուր Ատեանն ըստ մատենից ստացի 'ի քահանայից զժողովեալ տուրս ժողովրդեան 'ի ոռճիկ քահանայից:

VII. Հաւաքումն ոռձկաց.

Յօդ. ԻԱ.

Հաւաքումն պարտի լինել ընդ ձեռն  
ծխական քահանայից երկու նուագ ի տարւոջն. այն  
է յաւուրս Ծննդեան և Զատկական անօրհնեաց:

Յօդ. ԻԲ.

Յաղագս հաւաքման ոռձկաց՝ Ատեանն բաժանես-  
ցէ քահանայից զթերթահամարեալ, ժապավինեալ և  
կընքովն Ատենի կնքեալ Մատեանս. յորս ծխականք  
ստորագրեսցեն զտուրս իւրեանց և զազգանուանս:

Յօդ. ԻԳ.

Յետ աւուրցն անօրհնեաց ի սահմանեալ ժամա-  
նակին քահանայք ներկայացին յԱտեանն և զհաւա-  
քեալ առուրս ժողովրդեանն յանձնեսցին նմին:

Յօդ. ԻԴ.

Ատեանն պարտի յանձնել իւրաքանչիւր քահա-  
նայի զանդորրատոմսս ի կտրոնացն Անդորրամատենի  
յաղագս ստացման ոռձկական տըոցն առ ի հասուցա-  
նել ժողովրդեան յապահովութիւն:

Յօդ. ԻԵ.

Իւրաքանչիւր ծխական պարտի զվեցամսեա-  
տուրս ոռձկաց միանուագ վճարել. իսկ ցանկացողն  
զտարեկանն միանուագ վճարեսցէ:

VIII. Գանձարան Ատենի.

Յօդ. ԻԶ.

Գանձարան Ատենի գտանի ի Կոնսիստորիայի և  
կնքեսցի կնքօք Ատենի և Կոնսիստորիայի:

Յօդ. ԻԷ.

Բայցումն և փակումն արկեղ Ատենի պարտի վի-  
սել ի ներկայութեան երից Ատենակալաց, Քարտու-  
ղարի և Գանձապահի:

Յօդ. ԻԸ.

Կնիք Ատենի գտանի առ գանձապահն և բանալի  
արկեղն պահպանի յարկեղ Կոնսիստորիայի:

IX. Քարտուղար և Գանձապահ եւ Կայք Ատենի.

Յօդ. ԻԹ.

Քարտուղար Ատենի պարտի լինել հմուտ հայրե-  
նագէտ և ընտրի յԱտենէն:

Յօդ. I.

Քարտուղարն պարտի ունել զմի ժապաւինեալ  
մատեան յաղագս սեպիր օրագրութեանց ժողովա-  
կան գումարմանց. և զարձանագրական տպեալ թեր-  
թըս յաղագս արձանագրութեան մաքուր օրագրու-  
թեանց:

Յօդ. II.

Գանձտպան Ատենին պարտի լինել բարեհամբա-  
ւեալ ի հաւատարմութեան և հաշուապահական գի-  
տութեամբ. և ընտրի յԱտենէն:

Յօդ. III.

Գանձապահն պարտի ունիլ զերկուս ժապաւի-  
նեալ մատեանս Մտից և Ելից. ի մատենի մաից ստո-  
րագրեսցեն Ատենակալք զստացմանէ ՚ի քահանայից,  
տրոց ծխականաց և թէ որքան գումար գտանի ի շա-  
հեցողութեան. ի մատենի Ելից ստորագրեսցին քա-  
հանայքն յաղագս ստացման ոռճկացն. Անդորրամա-  
տեանն նոյնպէս պարտի դտանիլ առ գանձապահն.  
յորում արմատքն մնացեն և կտրոնքն յաղադս ստաց-  
ման տրոց ժողովրդեան, տացեն քահանայից ի յանձ-  
նումն ըստ պատկանելեաց:

Յօդ. IV.

՚ի վերջ իւրաքանչիւր ամի Ատեանն պարտի պատ-  
րաստել զմանբամասն տեղեկադիր հաշուէտութեան  
Արդեանց և Ծախուց, Արժէթղթոց և գումարաց Դրա-  
մատանց և օրագրական որոշմանց Ատենական գու-  
մարմանց և առանձին զրքուկիւ հրատարակել ի գի-  
տութիւն ժողովրդեան<sup>1)</sup>:

Յօդ. V.

՚ի վարձ աշխատանաց Քարտուղարի և Գանձտ-  
պահի սահմանի ոռճիկ ՚ի տոկոսեաց քահանայական  
ոռճկաց՝ զորոյ զքանակն որոշեսցէ Ատեանն:

Յօդ. VI.

Ատեանն պարտի ունիլ զմի կնիք. ի մեջն՝ եւաչ,  
Սկիհ, Աւետարան և ի բոլորն այս շրջագիր «Կնիք  
Ծխական Հոգաբարձութեան», և տարեթիւ:

X. Հաշուէտութիւն.

Յօդ. VII.

՚ի վերջ իւրաքանչիւր ամի Ատեանն պարտի պատ-  
րաստել զմանբամասն տեղեկադիր հաշուէտութեան  
Արդեանց և Ծախուց, Արժէթղթոց և գումարաց Դրա-  
մատանց և օրագրական որոշմանց Ատենական գու-  
մարմանց և առանձին զրքուկիւ հրատարակել ի գի-  
տութիւն ժողովրդեան<sup>1)</sup>:

1) Ծանօթութիւն—Ճանկալի էր, ըստ հնարաւորու-  
թեան հանգամանաց ժամանակին, զի  
Ատեանն ինքնին հրատարակէր զթերթ  
ինչ «Ելիսական Հոգաբարձութիւն» խո-  
րագրով. յորում երեսլոց էին ամենայն  
գործունէութիւնը Ատենին:



էջեր.՝


Վ լ ի պ ա տ կ.

Ո ւ ղ ի դ.

- 8 միակողմանի և թոյլ—  
» օգուտը չէ մարմնացել, մի  
» անսախանձելի  
9 Ռւսումնարանների,  
» եթէ ա. որ հրտպարտկական  
» և բ. որ ուրա մէջ  
16 և իրաւունք է տաշալիս  
17 հաշով ու խելացի  
18 պիտն սողայ  
» ժամանտկը, երբ քահանան  
19 հոգեսորականաց նւիթտկան  
20 գուցէ և աւելի լաւ և նրա-  
նից,  
27 'ի քահանտութբւն՝  
29 սխիթաբութիւնն  
31 կենքը առաջնորդողն  
» զիմումն անելով—ոչ  
33 երբ պահանջում իրան  
34 շուայլ, զեխ  
» կենքին  
» պարտաճանաչ  
35 մասիսաբութիւնները,  
» մկրտուած է կամիր  
» երաշխառութիւնը  
40 խեղճ քաղնան:  
41 խիստ է և չափազան.  
43 կտրեսորութիւնը՝  
» ցաւ 'ի սիրտ  
47 զբարտութընք  
49 որոյ տեսչութիւնն է յան-  
ձնուած  
» նկատմամբ.

- միակողմանի և թոյլ.  
օգուտը չէ մարմնացել մի  
անսախանձելի  
ռւսումնարանի,  
եթէ ա. հրապարակական  
և բ. սորա մէջ  
տալիս  
հաշով  
պիտի  
ժամանակը  
նիւթական  
գուցէ և աւելի նրանից,  
'ի քահանայութիւն՝  
մխիթաբութիւնն  
կետնըը  
զիմումն անելով, ոչ  
պահանջում են  
զեղիս  
կեանքին  
պարտաճանաչ  
մասիսաբութիւնները,  
կարմիր  
երաշխառութիւնը  
քահանան:  
չափազանց.  
կարեսորութիւնը՝  
'ի սիրտ  
զբարտութիւնք  
տեսչութեանն  
նկատմամբ,

- 50 մօտաւորելը—  
» պատճառաբանելով—  
» միջոջներ  
51 պատկերներն  
» ինքը քահանայ չէ.  
52 այսինքն  
» հոգեսորակտիմներից  
54 եղբկացութիւնը  
56 առաջագրում  
57 երեքտասաներորդ  
Եւ այպէս  
61 և Սշխորհագրութիւն.  
63 Զենադրում  
» յարգտնաց.  
67 կենսականից  
» ամբոջ  
» կփոխէն  
68 անիրտգործելու  
70 Ազգիս կազսի  
73 հոգւսոյ ննջեցելոյն:  
74 38  
» գումար.  
75 Փոփոխութեան:  
76 ծխական տրոցն՝  
77 չայրապեամի  
78 գումարմունսն այսպէս—
- 
- մօտաւորելը,  
պատճառաբանելով՝  
միջոցներ  
պատկերն  
չէ,  
այսինքն  
հոգեսորականներից  
եղբակացութիւնը  
առաջտղում  
երեքտասաներորդ  
Եւ այսպէս  
Աշխարհագրութիւն.  
Զենադրում  
յարգանաց.  
կենսականից  
ամբոջ  
կփոխեն  
անիրտգործելի  
կազմի  
հոգւս  
318  
գումար.  
Փոփոխութեան:  
ծխական  
չայրապեամի  
գումարմունսն այսպէս—





Սոյն գրքուկիս վաճառումից գոյացած արդիւնքի  
կէսը զբւում է Սըբաղան Առաջնորդի արամադրու-  
թեան տակ յօդուտ Հայ արկածեալների՝ արեան ա-  
միսների սարւոյս:

Հեղինակը:

99Ն է 40 Կ.



